ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ 15-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Երևան, 8-10 նոյեմբեր, 2017

ԱՄՓՈՓԱԳՐԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

15th INTERNATIONAL CONFERENCE OF YOUNG SCIENTISTS

Yerevan, 8-10 of November, 2017

CONFERENCE PROCEEDINGS

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Երիտասարդ գիտնականների 15-րդ միջազգային գիտաժողով
8-10 նոյեմբեր, 2017

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԱԶԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.
ՄԻՋԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

ԱՄՓՈՓԱԳՐԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

NATIONAL ACADEMY OF SCIENCES RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

ARCHAEOLOGY, ETHNOLOGY, FOLKLORISTICS.
INTERDISCIPLINARY APPROACHES

15th International Conference of Young Scientists
8-10 November, 2017

CONFERENCE PROCEEDINGS

Երևան-Yerevan
2017

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ARCHAEOLOGY

Հայկ Հայդոսյան

Հայաստանի միջին պալեոլիթի ոչ օբսիդիանային արտադրահամալիրները և դրանց կիրառական նշանակությունը

Բանալի բառեր՝ *Մուստերյան մշակույթ, միջին պալեոլիթ, հյուսիսային Հայաստան, ոչ օբսիդիանային արտադրահամալիրներ:*

Հայաստանը հնագույն մարդու կողմից նախնական բնակեցման գլխավոր ու առաջնային տարածքներից մեկն է, այսինքն՝ աշխարհագրական մի յուրօրինակ միավոր, որտեղ ներկայացված են քարի դարի բոլոր ստորաբաժանումները:

Հայաստանի միջին պալեոլիթը հաասկագրվում է մեզանից 300/270,000-40/35,000 տարով: Հայաստանում տվյալ ժամանակահատվածին պատկանող հնավայրերի ուսումնասիրության հարցում շատ կարևոր տեղ են զբաղեցնում հայտնաբերված ոչ միայն քարե գործիքների ձևերը և օգտագործման առանձնահատկությունները, այլ նաև օգտագործված հումքը: Այս զեկուցման մեջ անդրադառնալու ենք միջինպալեոլիթյան այն հնավայրերին, որոնց բնորոշ է ոչ օբսիդիանային արտադրանքը: Նման միջինպալեոլիթյան կայաններ են Աղավնատուն-1, Բագրատաշեն-1, Պտղավան-4 բացօթյա կայանները և Հովք-1 քարայրը, որոնցում առկա գործիքների գերակշիռ մասը պատրաստված է ոչ օբսիդիանային հումքից՝ կվարցիտ, անդեզիտաբազալտ, դացիտ, կրաքար, կայծքար և այլն:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, նման հնավայրերը տեղակայված են առավելապես Հայաստանի հյուսիսային հատվածում: Այս հետազոտության նպատակն է պարզել օգտագործված հումքի տեսակները, դրանց օգտագործման նպատակահարմարությունն ու համադրումը տեղական լանդշաֆտին:

Hayk Haydosyan

Middle Paleolithic Non-Obsidian Industries of Armenia and Their Practical Significance

Keywords: *Musterian culture, Middle Palaeolithic, northern Armenia, non-obsidian industries.*

As a geographical unit the Armenian Highland is one of the main and primordially inhabited areas, in which all subdivisions of the Stone Age are represented. Middle Paleolithic of Armenia dates to 300/270,000 - 40/35,000 B.P. In the study of the archaeological sites of that period the raw materials are especially important. In this paper we will discuss such Middle Palaeolithic sites which are charachtarised by non-obsidian industries. Majority implements found during the excavations of the open-air sites of Aghavnatun-1, Bagratashen-1, Ptghavan-4 and Hovk-1 cave where manufactured from non-obsidian raw materials, such as quartz, andesite-basalt, dacite, limestone, flint and etc. These archaeological sites are mostly located in the northern part of Armenia. The research aims to clarify the types of used raw materials, the expediency of usage and the correlation to the local environment.

Մարիամ Շախմուրադյան

«Անապատի օդապարուկների» կառուցվածքն ու ձևերը

Բանալի բառեր՝ *Հայաստան, Առաջավոր Ասիա, Միջին Ասիա, անապատի օդապարուկներ, նոր քարի դար-վաղ երկաթի դար, կառուցվածք, տիպ, դասակարգում, վիճակագրություն, գեոգլիֆներ:*

Սույն հետազոտության նյութը քարե խոշոր կառույցներն են, որոնք հայտնի են որպես «անապատի օդապարուկներ»: Դրանք սովորաբար կազմված են երկու երկար քարաշարերից և դրանց միացված ընդարձակ շրջապարսպից, որի արտաքին մասում կցակառուցված են նաև փոքր չափսեր ունեցող աշտարակներ: Առաջին և վաղագույն (նոր քարի դար) օրինակները

հայտնաբերվել են Սիրիայի և Հորդանանի անապատներում՝ Կահիրե-Բաղդադ օդային գծի օդաչուների կողմից և «օդապարուկներ» են կոչվում, որովհետև օդաչուներից մեկը դրանց արտաքին տեսքը նմանեցրել էր երեխաների խաղալիք օդապարուկների: Այդ անունը լայն ընդունելություն գտավ հետազոտողների շրջանում և շարունակում է գործածվել մինչ օրս:

Ներկայումս Առաջավոր և Միջին Ասիայում հայտնի են առավել քան 5000 օդապարուկներ: Դրանք հայտնաբերվել են Հայաստանում, Ուզբեկստանում, Ղազախստանում, Թուրքիայում, Իրաքում, Սիրիայում, Հորդանանում և Սաուդյան Արաբիայում: Նեգևի անապատում և Սինայի թերակղզու վրա հայտնաբերվել են նաև կառույցներ, որոնք կազմված են միայն աշտարակից և քարաշարերից: Որոշ հետազոտողներ դրանք օդապարուկներ են համարում և անվանում «V-աձև օդապարուկներ», իսկ հետազոտողների մյուս մասը դրանք օդապարուկ չի համարում, քանի որ այդ կառույցները չունեն շրջապարիսպ և հանդես են գալիս շատ սահմանափակ քանակությամբ և եզակի տարածաշրջաններում: Հայաստանում ևս հայտնաբերվել են «V-աձև օդապարուկներ»: Սիրիայում, Հորդանանում և Միջին Ասիայում օդապարուկները սկսել են հետազոտվել դեռևս XX դարի սկզբին, մինչդեռ Հայաստանում այդ կառույցների ուսումնասիրությունը նոր է սկսվել:

Օդապարուկների գործառույթն առայժմ բացահայտված չէ: Ամենից տարածված տեսակետն այն է, որ դրանք ծառայել են որպես որսադարաններ՝ կճղակավոր կենդանիներ, մասնավորապես վիթ բռնելու համար: Առաջարկվել են նաև տեսակետներ, որ դրանք կարող են անասնապահական կամ էլ պաշտամունքային նշանակություն ունենալ:

Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել, դասակարգել և վերլուծել անապատի օդապարուկների հիմնական բնույթը՝ կառուցվածքն ու ձևերը: Սահմանվել են այն չափանիշները, որոնք թույլ են տալիս կառույցը «օդապարուկ» համարել, և դրվել է իրական և ենթադրյալ օդապարուկների տարանջատման խնդիրը: Հիմնվելով մոտ 3000 օդապարիկների արբանյակային լուսանկարների ուսումնասիրության վրա՝ կազմվել ու դասակարգվել է այդ կառույցների ձևերի առավել ամբողջական ցանկը և հաշվարկվել է դրանց բաշխվածությունը տարբեր տարածաշրջանների համար: Այդ ձևերը համեմատվել են նաև Հին Աշխարհում գործածված նշանագրերի հետ և դրվել է օդապարուկների՝ գեոգլիֆներ լինելու խնդիրը:

Mariam Shakhmuradyan

The Structure and Forms of Desert Kites

Keywords: *Armenia, Southwest Asia, Middle Asia, Neolithic-Early Iron Age, desert kites, structure, types, classification, statistical analysis, geoglyphs.*

The subject of this research is large-scale stone structures, which are known as “desert kites”. These are usually comprised of two long, low stone rows and of a spacious enclosure attached to them. Small, tower-like structures are also attached to the exterior side of the enclosure. These structures were first discovered in the deserts of Syria and Jordan by the pilots of the postal Cairo-Baghdad flight at the beginning of the 20th century. They were given the name “kites” by one of the pilots, who perceived their exteriors as being similar to kites. This name gained wide acceptance among researchers and continues to be used to this day.

Currently there are more than 5000 kites identified in the Middle East and Southwest Asia. These were discovered in Armenia, Uzbekistan, Kazakhstan, Turkey, Iraq, Syria, Jordan and Saudi Arabia. In Negev and Sinai, structures were discovered that do not have an enclosure and are comprised only of a tower-like structure and stone rows. Some scholars consider them to also be kites and call them “V- shape kites”; others do not agree with this claim, in view of the fact that these structures do not have an enclosure and are present only in very limited quantities and regions. “V-shape kites” are also present in Armenia. In Syria, Jordan and Middle Asia, kites have been studied since the beginning of the XX century, while in Armenia their research has only began.

The function of these structures has not yet been discovered. The most widespread view is that they served as hunting traps for hooked animals and especially gazelle. Other views have also been advanced, including that kites were used for pastoral activities or ritual purposes.

The goal of this paper is to present, classify and analyze the main characteristics of the kites, namely, their structure and forms. Defined are the criteria that can be used to identify true kites, as it is suggested that there should be a differentiation between genuine kites and the alleged ones. Based on the analysis of nearly 3000 satellite images, a more or less complete inventory of the forms of these constructions was created, and a statistical analysis was carried out to determine the distribution of the forms across different regions. The forms were

also compared with the pictographs of the Ancient World, leading to the assumption that kites may be geoglyphs.

Ալեքսան Ջուհարյան

Վանակատի հումքի օգտագործման սկզբունքները բրոնզի դարում՝ pXRF վերլուծությամբ

Բանալի բառեր ՝ *բրոնզի դար, կուր-արաքսյան մշակույթ, օբսիդիան, երկրա-քիմիական անալիզ, pxrf:*

Բրոնզի դարաշրջանի ընթացքում ամբողջ Հարավային Կովկասում ծաղկում ապրող կուր-արաքսյան մշակույթի կրողների կողմից, չնայած մետաղագործության զարգացմանը, տարբեր ոլորտներում բավական ին-տենսիվ օգտագործվում էր նաև վանակատը: Տեղի բնակչության կողմից այդ հումքի օգտագործման սկզբունքների ուսումնասիրությունը միշտ արդիա-կան է եղել, քանի որ ցանկացած առանձին հնավայրի բնակիչների համար օբսիդիանի այս կամ այն աղբյուրի ընտրությունը կախված է եղել տվյալ բնակավայրին բնորոշ մի շարք պայմաններից:

Սույն աշխատանքում քննարկվում են մ.թ.ա. 3-րդ հազարամյակում Հայաստանի տարբեր շրջանների բնակիչների կողմից օբսիդիանի աղբ-յուրների օգտագործման սկզբունքները: Ուսումնասիրվում են տվյալ տարա-ծաշրջանի կուր-արաքսյան մշակույթին պատկանող երեք հուշարձանների՝ Ծաղկասարի, Թեղուտի և Ազարակի վանակատի ուտիլիզացման մոդելները: Թվարկված հուշարձանների պեղված վաղբրոնզեդարյան նյութից ընդ-հանուր քանակով 292 վանակատե նմուշներ ընտրվել և ենթարկվել են երկրաքիմիական անալիզի: Աշխատանքի հիմքում ընկած վերլուծությունը կատարված է գերժամանակակից շարժական ռենտգենային լուսածորման (pXRF) մեթոդով: Վերոնշյալ մեթոդի օգնությամբ նմուշի քիմիական կազմը ուսումնասիրելով հնարավորություն է ստեղծվում պատկերացում կազմել նմուշի ծագումնաբանության մասին: Վերծանելով մեր կողմից ստացված անալիտիկ արդյունքները ուսումնասիրվող 3 հուշարձաններից յուրաքանչ-յուրի համար ստացվել են 3 բացարձակ տարբեր ուտիլիզացման մոդելներ: Աշխատանքում կդիտարկվեն մոդելներից յուրաքանչյուրը՝ ցույց տալով

նրանց նմանությունները, տարբերությունները և առանձնահատկություն-ները:

Aleksan Juharyan

The Principles of Usage Obsidian as a Raw Material in Kura-Araxes Culture Using pXRF Analysis

Keywords: *Bronze Age, Kur-Araxes culture, obsidian, geochemical analysis, pXRF.*

In the whole Southern Caucasus the Kura-Araxes culture was that one to flourishing during the Bronze Age. Despite the metalworking development, obsidian as a raw material was also intensively used in different spheres of life. So the study of the principles of usage of this raw material by the local population has always been a quite interesting issue. The choice of the particular obsidian source for any individual site has been dependent on a number of unique conditions.

The paper observes the principles of using obsidian as a raw material during the 3rd millennium BC by the local people of different regions of Armenia. The obsidian samples from three monuments Tsaghkasar, Teghut and Agarak, which are belonging to the above-mentioned culture, are being investigated and the utilization models for them are being developed. A total of 292 obsidian samples were selected from the Early Bronze Age context and were subjected to geochemical analysis. The underlying analysis was based on very modern and precise portable X-ray fluorescence (pXRF) method. By studying the chemical composition of the samples with the help of the above-mentioned method, it becomes possible to make a reliable obsidian sourcing. By investigating the analytical results obtained by us, 3 absolutely different utilizing models have been obtained for each of the three explored monuments. In the study, each unique model will be considered to illustrate their similarities, differences and peculiarities.

Աննա Ազիզյան

Հայաստանի կուր-արաքսյան խեցեղենի հորինվածքային պատկերների տիպաբանական առանձնահատկությունները

Բանալի բառեր*՝ *հնագիտություն, կուր-արաքսյան խեցեղեն, հորինվածք, կառուցվածք, զարդաձև, հարդարման եղանակ:

Կուր-արաքսյան մշակույթի խեցեղենի բազմազան զարդամոտիվների մեջ աչքի են ընկնում հորինվածքային պատկերներն իրենց ուրույն լուծումներով: Նման օրինակներ մեզ հայտնի են Հայաստանի և նրա սահմաններից դուրս գտնվող կուր-արաքսյան այլ հուշարձաններից:

Զեկուցումը նվիրված է Արագածի, Կառնուտի, Մեծ Սեպասարի, Շենգավիթի, Շիրակավանի հուշարձաններից հայտնաբերված խեցեղենին պատկերվող հորինվածքային լուծումներին: Ըստ ժամանակագրական փուլերի և կառուցվածքի՝ դրանք բաժանվել են հիմնական երեք խմբի՝ վաղ, զարգացած և ավարտական փուլերի: Վաղ փուլը ներկայացնում են պարզագույն հորինվածքները՝ ներճկված շրջաններ, վերադիր ելուստներ: Հորինվածքը տեղադրված է անոթի գրեթե հորիզոնական առանցքի վրա: Զարգացած փուլին վերաբերվող հորինվածքները հիմքում կրում են նախորդ՝ վաղ փուլին պատկանող հիմնական կառուցվածքը: Պարզունակ հորինվածքային լուծումները ստանում են ավելի բարդ կառուցվածք՝ համալրվելով նոր զարդամոտիվներով: Ավելանում են պարույրներ, թռչուններ, վիշապներ և այլ տարրներ: Ի տարբերություն նախորդ փուլի՝ աչքի են ընկնում իրենց հարուստ ու զանազան պատկերագրությամբ: Ավարտական փուլին բնորոշ են ազատ ոճով կատարված ոճավորված հորինվածքները: Այդ օրինակների զարդաձևերը կատարված են սեղմելու-փոսիկավորելու, ներճկելու, ինչպես նաև ռելիեֆ եղանակներով: Պատկերվել են մեծ մասամբ կարասների, կճուճների և քրեղանների վրա: Ուշագրավ է, որ զարդարվել է անոթի միայն մեկ կողմը:

Anna Azizyan

Typological Pecularities of the Compositions of the Kura-Araxes Pottery of Armenia

Keywords: *Archaeology, Kura-Araxes pottery, composition, structure, decoration motif, decoration technique.*

Among the various motifs of the decoration of the Kura-Araxes pottery the compositional images are distinguished. The similar examples are known both in Armenian and other sites of the Kura-Araxes culture.

This report aims at presenting the compositional structures of this assemblage according to materials from the sites of Aragats, Karnut, Mets Sepasar, Shengavit, Shirakavan. According to the chronological and structural features, the compositions divided into three main groups: early, developed and final phases. The early phase is represented by the simple compositional structure impressed circles, overhead protrusions. The composition is placed almost on the horizontal axis. In the developed phase the compositions continue the main structure of the previous phase and are complemented with new ornamental motifs - spirals, birds, dragons and other elements. Unlike the previous stage the comositions are distinguished by their rich iconography. The stylized ornaments are typical of the final phase. The decoration motifs of these examples demonstrate various techniques: impressing, incising and reliefs. The majoritiy of compositions is depicted on the pithoi, jars and bowls. It is remarkable that, as a rule, only one side of the vessel was decorated.

Տաթևիկ Հարությունյան

Քարաշամբի նորահայտ շքասեղների ժամանակագրությունը և տիպաբանությունը

Բանալի բառեր՝ *Քարաշամբ, շքասեղ, տիպ, զարդ, հագուստ, բրոնզի դար, վաղ երկաթի դար, դեկորատիվ-կիրառական արվեստ, դասակարգում:*

Զեկուցման մեջ ներկայացվելու են Քարաշամբի դամբարանադաշտի 2009-2016 թվականների պեղումներով հայտնաբերված բրոնզե շքասեղների

ձևատիպաբանական վերլուծության արդյունքները: Շքասեղները գտնվել են պեղված 500 դամբարաններից 16-ում: Քննվող 17 շքասեղների վաղ օրինակները թվագրվում են մ.թ.ա. 19/18-րդ դդ., իսկ առավել ուշ նմուշները՝ մ.թ.ա. 9/8-րդ դդ. սահմանագծով:

Շքասեղների դասդասման համար հիմք ենք ընդունել դրանց կառուցվածքային ձևաստեղծ տարրի՝ գլխիկի պատրաստման և ձևավորման առանձնահատկությունները: Ըստ գլխիկների ձևատիպաբանական հատկանիշների՝ քննվող շքասեղները ստորաբաժանել ենք 8 տիպերի: Տիպերն, իրենց հերթին, ներկայացված են տարբերակներ կազմող օրինակներով:

Հայաստանից և հարևան երկրներից հայտնաբերված նույնատիպ զարդի օրինակների, շքասեղներ պարունակող դամբարանների մշակութային համատեքստի, արձանագրված թաղման ծեսի, ննջեցյալների սեռատարիքային տվյալների համալիր քննությամբ փորձել ենք ներկայացնել միջին, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի տարբեր ենթափուլերին բնորոշ դեկորատիվ-կիրառական արվեստի մաս կազմող այս զարդերի ձևավորման, գոյատևման ժամանակագրական սահմանները, տարածման արեալը:

Մասնագիտական գրականության մեջ շքասեղների կիրառության մասին տարբեր կարծիքներ են շրջանառվում: Քարաշամբյան շքասեղներից մի քանիսի տեղի ու դիրքի փաստագրումները թույլ են տալիս հստակություն մտցնել նաև այդ հարցերում:

Tatevik Harutyunyan

The Chronology and Typology of Newly Discovered Pins of Karashamb

Keywords: *Karashamb, pin, ornament, clothing, Bronze Age, Early Iron Age, decorative-applied art, classification.*

The report presents the results of morphological and typological analysis of bronze pins found during 2009-2016 excavations in Karashamb cemetery. Pins were found in 16 tombs out of 500 excavated ones. The early samples of 17 pins

date back to XIX/XVIII centuries BC and later samples date back to IX/VIII centuries BC.

The classification of the pins is based on the peculiarities of making and decorating of the pinheads which are the main structural forming elements. According to the morphological and typological features of pinheads, pins are divided into 8 subgroup. Each type is represented by its variants.

Through combined data examination of identical samples of pins, cultural context of tombs which contains pins, burial rituals, age and sex data of the deceased recorded in Armenia and neighboring countries, we attempt to represent the chronological borders and the areal of distribution of formation and survival of this type of ornaments which make up part of decorative and applied Art, characteristic to different periods of the Middle Bronze, Late Bronze and Early Iron Ages.

In the professional literature there are different opinions about the application of pins. The records of the place and position of certain pins of Karashamb, allow us to clarify this issue as well.

Լուսինե Այեքսանյան

Միջինբրոնզեդարյան-վաղերկաթեդարյան ուլունքների տիպաբանությունը. Նախնական դիտարկումներ

Բանալի բառեր՝ *հնագիտություն, միջին բրոնզի դար, ուշ բրոնզի դար, վաղ երկաթի դար, ուլունք, տիպաբանություն, ձևաբանություն, դամբարան, թաղված անհատ, սեռատարիքային առանձնահատկություն:*

Զեկուցումը վերաբերում է միջին բրոնզի դարից մինչև վաղ երկաթի դար ընկած ժամանակահատվածի՝ տարբեր հուշարձաններից (Լոռի բերդ, Շիրակավան, Լճաշեն, Վերին Նավեր, Նոր Արմավիր/Արգիշտիխինիլի, Նոյեմբերյան, Դվին և այլն) հայտնաբերված ուլունքների ուսումնասիրությանը, որոնք պահվում են Հայաստանի ազգագրության թանգարանում: Դրանք հիմնականում պատրաստված են տարբեր քարատեսակներից, ծովախեցուց,

մածուկից: Ըստ ուլունքների ձևաբանական հատկանիշների կազմված տիպաբանական ցուցակում առանձնանում են 13 խումբ (գուրզաձև, գնդաձև, բազմանիստ, գլանաձև, օղակաձև, տակառաձև, երկկոն և այլն):

Արված նկարագրությունների արդյունքում փորձ է արվելու պատասխանել, թե հնարավոր է արդյոք ուլունքներով որոշել.

- դամբարանում թաղված անհատի սոցիալական կարգավիճակը,
- թաղված անհատների սեռերի տարբերությունը,
- կատարել եզրահանգումներ տարիքային փուլերի առանձնահատկությունների վերաբերյալ:

Lusine Aleksanyan

Typology of the Middle Bronze - Early Iron Age Beads (Preliminary Review)

Keywords: *Archaeology, Middle Bronze Age, Late Bronze Age, Early Iron Age, bead, typology, morphology, burial, buried individual, gender and age specificity.*

The report aims to the study the beads which have been unearthed during the excavations of the various sites (Lori Berd, Shirakavan, Lchashen, Verin Naver, Nor Armavir / Argishtikhinili, Noyemberyan, Dvin etc.) and date to the period from the Middle Bronze Age to the Early Iron Ages. The assemblage is now preserving in the Ethnography Museum of Armenia. They are mainly made of different types of stones, shell and paste. Based on the typological features, the beads are separated into the 13 groups (mace-shaped, spherical, polyhedral, cylindrical, ring-shaped, barrel-shaped, biconical etc.).

As a result of the descriptions of the beads, there an attempt will be made to answer whether it is possible to define:

- The social status of a buried individual,
- Differences of sex of buried individuals,
- To make conclusions about the peculiarities concerning the age of the buried individuals.

Բենիկ Վարդանյան

Հին Հայաստանի ուշ բրոնզի դարաշրջանի դամբարանային համալիրների սոցիալ-ժողովրդագրական և սեռատարիքային վերլուծությունների խնդիրներն ըստ Լճաշենի դամբարանադաշտի

Բանալի բառեր՝ *դամբարանադաշտերի կառուցվածք, ուշբրոնզեդարյան հասարակություն, պատմական սոցիալ-ժողովրդագրություն, էլիտա, սեռատարիքային վերլուծություն, հնագիտական հավաքածու, հասարակական շերտավորում:*

Հայաստանի Հանրապետության տարածքում պեղված բազմաթիվ հուշարձաններից առանձնանում է Լճաշենի ուշբրոնզեդարյան դամբարանադաշտը:

Դամբարանադաշտի կառուցապատումը կրում էր *գաղափարական ծանրաբեռնվածություն*, որը Հին Հայաստանի տարբեր միկրոտարածքներում ուներ տեղական առանձնահատկություններ: Լճաշենի դամբարանադաշտի դամբարանները պետք է դասակարգել ըստ տիրոջ սեռատարիքային և սոցիալ-մշակութային խմբի պատկանելության՝ հաշվի առնելով նաև արտաքին կառույցի տիպաբանությունը: Դամբարանադաշտի արևմտյան տեղամասը, որն ամենաուշ փուլին է պատկանում, ներկայացնում է իբրև այդ համայնքում սեռատարիքային որոշակի խմբերի հանգստարան, որտեղ թաղված են հիմնականում մինչև 22 տարեկան անհատներ: Լճաշենի դամբարանադաշտի երրորդ տեղամասում առանձնանում են մանկական, մոր ու մանկան, հոր ու մանկան, «նահապետի և մանկան» թաղումներ և միասեռ թաղումներ, որոնք հավանաբար երկվորյակներ են եղել:

Լճաշենի դամբարանադաշտի՝ քննվող դարաշրջանին վերաբերող աճյունի մնացորդներ պարունակող 186 դամբարանում առկա են 196 կմախք, որոնց մեջ տղամարդկանց թիվը կազմում է 96 (ողջ ընտրույթի 49 %), իսկ կանանցը՝ 77 (ողջ ընտրույթի 37 %): Հետևաբար՝ մանկական թաղումները, որոնք կազմում են դամբարանադաշտի արևմտյան հատվածի հիմնական մասը, կազմում են 14 %-ը: Լճաշենում միտում կա թաղման ուղղության և սեռային պատկանելությունների օրինաչափության՝ աջ կողքի թաղվածները արական սեռի են (56%), ձախ կողքի թաղվածները՝ իգական (58 %):

Լճաշենում պեղված դամբարաններում հիմնականում հասարակական

շերտավորման մեջ «շարքային համայնականների» խավին պատկանող թաղումներ են, ինչը արդյունք է նախորդ տարիներին համատարած խոշոր դամբարանաթմբերի պեղումների:

Լճաշենի հասարակության ներսում գոյություն ունեցած մասնագիտական շերտավորման համար որպես ցուցիչ, բացի թաղման տեսակից, առկա են այլ հատկանիշներ ևս: Այսպես, այն թաղումներում, որտեղ ենթադրվում է հասարակական վերակարգության մեջ քաղաքական կամ ռազմական էլիտային պատկանող անձնավորության հուղարկավորություն, թաղման տեսակը դիաթաղումն է: Իսկ դիակիզմամբ թաղումներում, որոնք կազմում են Լճաշենում պեղված դամբարանների 1.4 %-ը, (ողջ ՈՒԲԴ Հայաստանում 10 %-ը 449 քննվող դամբարանից), ելնելով թաղման կառույցի չափերից, ուղեկցող գույքի տեսականուց ու քանակից, ամենայն հավանականությամբ պատկանել են հասարակության մեկ այլ՝ քրմական դասին:

Benik Vardanyan

The Issues of Social, Demographic, Gender and Age Differentiation of the Late Bronze Age Armenia, According to the Materials of the Lchashen Cemetery

Keywords: *Structure of cemeteries, Late Bronze Age society, historical and social demography, elites, gender and age studies, archaeological complex, social complexity.*

Among the various sites excavated in the territory of Armenia, the Lchashen cemetery of the Late Bronze Age is distinguished. The cemetery was constructed by some principles which took local forms in different parts of pre-historic Armenia. The tombs of the Lchashen cemetery can be classified by the gender and age differentiation, by the belonging of the buried to a certain social-cultural group and also by the typology of the outer structure of the tombs.

The western section of the cemetery, which dates to the latest period of this archaeological site, presents a place of burial of certain sex and age groups in the community. There were buried mainly kids and young people to 22 years old. There were children’s, mother and child, father and child, "ancestor and child" and also homogeneous burials, possibility of presence of twins are recorded at the section-3 in the Lchashen cemetery. In the Lchashen cemetery there were 196

skeletons in the 186 burials of the examined period. Among them 96 skeletons were male (49% of the total of the selected tombs) and 77 were female (37% of the total of the selected tombs). So, child burials that occupied the main part of the western section of the Lchashen cemetery were 14% of the total of the selected tombs. In Lchashen cemetery, there is a principle of burial in a certain way for different sexes. The male corpses are oriented to the right (56%), and female - to the left (58%). The excavated tombs of Lchashen often represent the burials of the "ordinary people of community". The individuals belonging to the political or military elites are also attested in the tombs. Based on the data of the size of tombs and the assemblage and quantity of funeral goods we can suppose that burials with the cremations (1.4% of the whole) probably belonged to the spiritual elite.

Սոնա Մանուկյան

Հարավկովկասյան բրոնզե գոտիների ֆենոմենը. Պատկերագրություն և հնագիտական համատեքստ

Բանալի բառեր՝ *վաղ երկաթի դար, բրոնզե գոտի, Հարավային Կովկաս, պատկերագրություն, հնագիտական համատեքստ:*

Բրոնզե գոտիները կիրառվել են Իրանի, Փոքր Ասիայի, Էգեյան աշխարհի և այլ մշակույթներում: Կովկասը նույնպես մտնում է գոտիների կիրառման տարածույթի մեջ: Այս հաղորդման նպատակն է անդրադառնալ, մասնավորապես, Հարավային Կովկասի գոտիներին առնչվող այն խնդիրներին, որոնք նոր մեկնաբանությունների հնարավորություն են ընձեռում:

Չնայած այդ գոտիների պատկերագրությունը հիմնավոր ձևով ուսումնասիրվել է տարբեր հետազոտողների կողմից (Ս. Եսայան, Ն. Ուռուշաձե, Մ. Պոգրեբովա և այլք), սակայն դրանց պատկերագրության ու հնագիտական համատեքստի համեմատության փորձ դեռևս չի իրականացվել: Այս աշխատանքի սահմաններում մեր խնդիրն է անդրադառնալ վերջինիս քննությանը:

Խնդրո առարկա տարածաշրջանում բրոնզե գոտիներն ի հայտ են գալիս հիմնականում դամբարաններում՝ սկսած վաղ երկաթի դարից: Մեզ հայտնի 264 դամբարաններում պեղվել են 277 զարդարուն և ավելի քիչ անզարդ բրոնզե գոտիներ: Այդ դամբարանների հնագիտական համատեքստի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք պատկանել են սոցիալական տարբեր խավերի:

Հարավկովկասյան բրոնզե գոտիների պատկերագրված օրինակների միջոցով վերարտադրվում է տվյալ հասարակության կենսակերպը (կենցաղ, պատերազմ, որս, խնջույք): Մենք խնդիր ենք դնում ցույց տալ, թե կոնկրետ ինչ զենք ու սարքավորումներ են կրել մարդիկ, ինչպիսին է խնջույքի սպասքը, կարգը, ինչ կենդանատեսակներ են պատկերված՝ փորձելով կապել այն հնագիտական միջավայրի հետ, որտեղ դրանք հայտնաբերվել են:

Sona Manukyan

The Phenomenon of the South Caucasian Bronze Belts: Iconography and Archaeological Context

Keywords: *Early Iron Age, bronze belt, South Caucasus, archaeological context.*

The bronze belts were used in Iran, Asia Minor, Aegean world and other regions. The Caucasus is also included in the scope of the area where the bronze belts were widely used. This report aims at discussing some issues concerning the South Caucasian belts which give opportunities for new comments.

Although the iconography of those belts was basically examined by different researchers (S. Yesayan, N. Urushadze, M. Pogrebova, etc.) however the comparison of iconography and archaeological contexts has not been studied yet.

Since the Early Iron Age the bronze belts appear mainly in the tombs: 277 decorated and non-decorated bronze belts were excavated in the 264 graves. The analysis of archaeological contexts of the tombs revealed that these belts belonged to different social strata.

The study of iconography of the South Caucasian bronze belts sheds new light on various patterns of social order (lifestyle, war, hunting, feasting). We aim at pointing out what types of weapons and equipments were used during the rituals, what kinds of animals are illustrated on belts. In these regards we try to connect the iconography with archaeological context of the tombs in which these belts have been discovered.

Նարինե Սարգսյան

Արդաբիլյան խեցեղեն. Նախնական դիտարկումներ

Բանալի բառեր՝ *Աքեմենյան ժամանակաշրջան, Մերձավոր Արևելք, Արդաբիլ, դամբարան, խեցեղեն, թվագրության և տարածման խնդիրներ:*

Աքեմենյան Իրանի հյուսիսարևմտյան շրջաններում և Մերձավոր Արևելքի երկրներում տարածում է գտնում խեցեղենի յուրօրինակ մի տեսակ, որը մասնագիտական գրականության մեջ անվանում են «Արդաբիլյան խեցեղեն»: Այն դեղնավուն խեցատով, կարմրա-շագանակագույն եռանկյունաձև զարդերով խեցեղեն է, որը գերազանցապես հայտնաբերվում է դամբարաններից: Առաջին անգամ այն գտնվել է Իրանի Արդաբիլ քաղաքում, այդ պատճառով ստացել է «Արդաբիլյան խեցեղեն» անունը և շարունակում է հայտնաբերվել ներկայիս Իրանի, Իրաքի, Հայաստանի, Ադրբեջանի հուշարձաններից: Հետազոտողները առանձնացնում են նմանատիպ խեցեղենի երեք տարբերակ, ըստ որում, ոմանք *Արդաբիլյանը* համարում են մի տեսակի հաջորդական շարունակություն, մյուսները դիտարկում են որպես առանձին տեսակ: Տարբեր աղբյուրներում և հետազոտություններում այս խեցեղենի թվագրության հետ կապված ևս տարակարծություններ կան, ուստի այն մանրակրկիտ ուսումնասիրության կարիք ունի: Սույն զեկուցման մեջ փորձ է արվում ներկայացնել «Արդաբիլյան խեցեղենը»՝ ընդհանրացնելով նախորդ ուսումնասիրությունների արդյունքները և հատկապես ուշադրություն դարձնելով *Արդաբիլյան ֆենոմենի* տարածման և թվագրման խնդիրներին, ինչպես նաև դրա ուսումնասիրման մոտեցումներին:

Narineh Sarkisian

The Ardabil Style Pottery. Preliminary Observations

Keywords: *Achaemenid period, Near East, Ardabil, tomb, pottery, dating and distribution issues.*

A unique type of pottery had been widespread in the north-western parts of Achaemenid Iran and the countries of the Near East, which in the professional literature is known as the "*Ardabil style pottery*".

It is the ceramic with a buff paste painted with red or reddish-brown solid or hatched triangles. This type of ceramics is mostly found by the excavations of the tombs. It was first unearthed in Ardabil, Iran, which becomes the reason that was called "Ardabil pottery". Later, it was also found in the different sites of Iran, Iraq, Armenia and Azerbaijan.

Researchers distinguish three types of similar pottery. In addition, some consider the *Ardabil pottery* as a consecutive continuation of a single type, the others discuss it as a separate type. In the different sources and studies there are also disagreements connecting with dating of this type of pottery, so the problem needs more comprehensive investigation. This report attempts to represent the *Ardabil style pottery,* generalizing the results of the previous studies. We pay more attention on the problems of distribution and dating of the "*Ardabil-style pottery"* phenomenon, as well as the approaches to its study.

Լուսինե Հարությունյան

Մշակութային լանդշաֆտի տարրերը անտիկ Հայաստանի օրինակով

Բանալի բառեր՝ *մշակութային լանդշաֆտներ, լանդշաֆտի տարրեր, անտիկ Հայաստան, պատմա-աշխարհագրական վերլուծություն:*

Մշակութային լանդշաֆտներն այն մշակութային օբյեկտներն են, որոնք ներկայացնում են բնության և մարդու համատեղ գործունեությունը: Մշակութային լանդշաֆտներն ենթարկելի են բնական և մարդածին անընդհատ ներգործության, և չնայած դրանց երկարաձիգ իներցիային մի դարաշրջանից

մյուսը, նույն տարածքում տեսանելի են լանդշաֆտի որոշակի փոփոխու-թյուններ, մշակութային զանազան երևույթների շեշտադրումներ: Մշակու-թային լանդշաֆտի կառուցվածքի, ծավալատարածական լուծումների և բո-վանդակության լուսաբանման համար կարևոր է դրա տարրերի ման-րամասն ուսումնասիրությունը: Լանդշաֆտի տարրերի մասին խոսելիս, ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել դաշտերը, արոտավայրերը, երկրագործական կառույցները, տարաբնույթ բնակավայրերը (քաղաքներն իրենց հարակից տարածքներով (խոռա), մայրաքաղաքները, գյուղերը, ագարակները), աշխարհիկ և պաշտամունքային կառույցները, դամբարա-նադաշտերը, ենթակառուցվածքները ևն: Աշխատանքում փորձ է արվում վերականգնել անտիկ Հայաստանի մշակութային լանդշաֆտը՝ այն կազմող տարրերի մանրամասն ուսումնասիրությամբ: Մշակութային լանդշաֆտի ընդհանրական տարրերի տեղայնացումը կոնկրետ ժամանակի ու տարա-ծության՝ այն է անտիկ ժամանակի Հայաստանի վրա, ցույց է տալիս մի կող-մից տվյալ ժամանակաշրջանի հելլենիստական մշակույթի տարրերի համա-դրումը, մյուս կողմից, տեղական ավանդույթների կնիքը լանդշաֆտի տար-րերի ձևավորման վրա, չէ որ անտիկ մարդուն շրջապատող ամեն ինչը ստեղծված չէր միայն անտիկ ժամանակաշրջանում:

Աշխատանքի համար աղբյուրագիտական հիմք են հանդիսացել հին ճանապարհորդների, հնախույզների և հնագետների բազմապիսի վկայու-թյունները, քարտեզագրական նյութերը, օտար՝ հատկապես հունական և լատինական, ինչպես և վաղ միջնադարի հայ հեղինակների տեղեկություն-ները հեռավոր անցյալի մասին, ինչպես նաև հնագիտական ու վիմագրական նյութերը:

Lusine Harutyunyan

Elements of Cultural Landscape in Ancient Armenia

Keywords: *Cultural landscapes, landscape elements, Ancient Armenia, historical and geographical analysis.*

Cultural landscapes are the cultural objects which represent the human and nature combined activity. Cultural landscapes are constantly exposed to natural

and anthropogenic impacts and, despite their prolonged inertia, some landscape changes are visible in the same area from one era to another, with emphasis on various cultural phenomena. A detailed study of its elements is important for understanding the cultural landscape structure, dimensional space solutions and contents. Speaking about the elements of the landscape, it is possible to isolate the fields, pastures, agricultural structures, various settlements (capitals, towns and their contiguous areas, villages, farms), palaces, roads, channels, borders, walls, open air and covered places of worship, necropolises and more. The article aims to restore the cultural landscape of the Ancient Armenia through a detailed study of its components. The localization of the common elements of the cultural landscape in certain time and space, in Ancient Armenia, shows that, on the one hand, it combines elements of the Hellenistic culture of the discussed time, and on the other hand, local traditions have also left their trace on the formation of landscape elements.

The research based on the cartographic materials and the historical sources of ancient travelers and archaeologists, foreign, especially Greek and Latin as well as early medieval Armenian authors' information about the distant past. We also used the archaeological and lithographic materials.

Արմենուհի Մկրտիչեան

Գառնիի հոնիական տաճարը

Բանալի բառեր՝ *Գառնի, հնագիտություն, ճարտարապետություն, արձանագրություն:*

Ինչպե՞ս և ինչու՞ Գառնիի անտիկ տաճարը պահպանվեց դարերի ընթացքում: Մ. թ. առաջին դարով թվագրվող հոնիական կառույցը հրաշքով փրկվեց քրիստոնեական Հայաստանում: 1679թ. երկրաշարժը մասնակի ավերեց տաճարը: Զեկուցման նպատակն է շարունակել այս նշանավոր հոնիական կառույցի ճարտարապետության և դեկորատիվ հարդարանքի մանրամասն ուսումնասիրությունը: Միաժամանակ, ներկայացնել անտիկ տաճարի բազալտե սալերից մեկի վրա փորագրված հայերեն նորահայտ

արձանագրությունը: Ուսումնասիրության մեջ դիտարկվելու են հոնիական կառույցի գոյության տարբեր փուլերը, ինչի արդյունքում հնարավոր կլինի հասկանալ տաճարի հստակ գործառույթները ամրոցի համակարգում՝ սկսած դրա կառուցումից՝ մ. թ. առաջին դար մինչև ամբողջական վերականգնումը 20-րդ դար:

Armenuhi Magarditchian

The Ionic Temple of Garni

Keywords: *Garni, archaeology, architecture, inscription.*

How and why the antique temple of Gaṙni survived through centuries? The ionic building, dating from the 1st century AD, miraculously survived until the Christianization of Armenia. In 1679, an earthquake caused a partial destruction of the temple. The purpose of this conference is to proceed to a meticulous study of the architecture of the ionic building and its decorative patterns. Secondly, we will present an unpublished Armenian inscription engraved in a basalt bloc, belonging to the antique building. The research will present the different phases of use of the ionic building, also it will enable us to understand the distinct functions of this temple inside the fortress from its construction in the 1st century AD until its complete anastylosis in the 20th century.

Ավետիս Գրիգորյան

Սոթք 1. Դվին-Պարտավ առևտրական ճանապարհը վերահսկող ամրոցը

Բանալի բառեր՝ *հնագիտություն, պեղումներ, վաղ միջնադար, ամրոց, պաշտպանական համակարգ, առևտրային ճանապարհ:*

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (ղեկ.՝ Ա. Բոբոխյան) 2014թ. պեղումներ իրականացրեց Գեղարքունիքի մարզի Սոթք գյուղում գտնվող «Սոթք-1» ամրոցում: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ամրոցը, տեղակայված լինելով վաղմիջնադարյան Դվին-Պարտավ տարանցիկ առևտրային ճանապարհի Գեղարքունիք-

Արցախ հատվածում և շրջակայքի նկատմամբ ունենալով վերահսկող դիրք՝ կարևոր դիտակետ է հանդիսացել Սոթքի լեռնանցքով Արցախ մտնող ճանապարհին:

Ամրոցում իրականացված պեղումների արդյունքում բացված հնագիտական համատեքստի քննությունը, պաշտպանական համալիրի առանձին բաղադրիչների ուսումնասիրությունը, գտածոների՝ մասնավորապես խեցեղենի տիպաբանումը և Հայաստանի այլ շրջանների՝ առանձնապես Արագածոտն գավառից հայտնի նյութերի հետ զուգադրումը ցույց է տալիս, որ ամրոց-դիտակետի կենսագործունեության հիմնական շրջափուլը համապատասխանում է Դվին-Պարտավ ճանապարհի գործուն ժամանակաշրջանին և վերջինիս գործառույթն ուղղակիորեն կապված պետք է լիներ առևտրական–քարավանային ճանապարհի վերահսկողության հետ:

Ամրոցի տեղակայումը ճանապարհի այս հատվածում պատճառաբանված էր նաև այն հանգամանքով, որ այն գտնվում էր առևտրական ուղու հանգրվան հանդիսացող և միջնադարյան սկզբնաղբյուրներից հայտնի իշխանանիստ Սոդք ավանում: Այն, մոտակա «Նորաբակ-1» ամրոցի հետ կազմելով Սևանի ավազանի պաշտպանական համակարգի մի օղակը, վերահսկում էր դեպի ոսկու հանքեր և Ռմբոստյան կիրճ մտնող ճանապարհը, որտեղ տեղակայված էր նաև Դվին-Պարտավ առևտրական ուղու սպասարկող Զաութիս քարավանատունը:

Միջնադարյան «Սոթք-1» ամրոցի հնագիտական հետազոտության արդյունքները հնարավորություն են ստեղծում ճանաչելի դարձնել առևտրական ճանապարհի գործունեության հանգամանքով պայմանավորված մշակութային իրողությունները և լրացնել Դվին-Պարտավ ճանապարհի այս հատվածին վերաբերող հնագիտական տեղեկությունները:

Avetis Grigoryan

Sotk 1. The Fortress Controlling Dvin-Barda Trade Route

Keywords: *Archaeology, excavations, early Middle Ages, fortress, defensive system, trade road.*

In 2014 the expedition group of the Institute of Archaeology and Ethnography NAS RA carried out excavations in the territory of the "Sotk-1"

fortress in the village of Sotk of the Gegharkunik region. The obtained data showed that the fortress was located in the Gegharkunik-Artsakh section of the main medieval transit road of Dvin-Barda. Having dominant position towards the surrounding territory, it served as an important station on the transit road, leading through the Sotk pass to Artsakh province.

The examinations of the archaeological contexts, the study of details of the defensive complex and typology and comparison of found ceramic materials with other assemblages of the different sites of Armenia (especially Aragatsotn region) demonstrate that the period of main activity of the fortress is coinciding with dynamic activity of the road. The important function of the fortress is the control of the transit road.

The location of the fortress in this area is explained by the fact that it was in the medieval town of Sodk which is mentioned in the historical sources. With the nearby fortress of "Norabak-1" it occupies an important place in the defensive system of the basin of the lake Sevan. It also was controlling the road, leading to the gold mines and the Rumbostian canyon where was situated the caravan station Zautis.

The results of archaeological researches of the medieval fortress "Sotk-1" allow us to understand the cultural context connected with the activity of the transit route and complement our knowledge about this part of Dvin-Barda road.

Հասմիկ Հովհաննիսյան

Անանուն ֆոլիսների ժամանակագրության որոշ ճշգրտումներ

Բանալի բառեր՝ *Բյուզանդական կայսրություն, դրամաթողարկում, անանուն ֆոլիս, կայսեր անունով ֆոլիս, ժամանակագրություն, Կոնստանտին X:*

Բյուզանդական կայսրության դրամաթողարկման մեջ առանձնանում է պղնձե դրամների մի շարք, որի թողարկումը սկսվել է 969 թվականին և դադարեցվել 1092-ին: Հետազոտողների կողմից տասնմեկ դասերի բաժանված ֆոլիսների այդ շարքի հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրամների վրա բացակայում են կայսեր պատկերն ու անունը:

Ներկայումս ընդունված է համարել, որ դրանք թողարկվել են անընդմեջ՝ մինչև Ալեքսիոս I-ի դրամական ռեֆորմը, իսկ Կոնստանտին X-ից սկսած զուգահեռաբար թողարկվել են նաև կայսեր պատկերով ֆոլիսներ: Դրամների և պատմական տվյալների բազմակողմանի վերլուծության արդյունքում, մենք հանգել ենք այն եզրակացության, որ անանուն ֆոլիսների թողարկումը 969-ից մինչև 1092 թվականն ընթացել է որոշ ընդհատումներով: Զեկուցման մեջ ներկայացվում է թողարկումների ժամանակագրության նոր աղյուսակ, որը կարող է որոշակիորեն փոխել հիշյալ ժամանակահատվածում բյուզանդական դրամաթողարկման և պատմական իրողությունների վերաբերյալ պատկերացումները:

Hasmik Hovhannisyan

A Chronological Revising of the Anonymous Folles

Keywords: *Byzantine Empire, coinage, anonymous folles, “signed” folles, chronology, Constantine X.*

In the coinage of the Byzantine Empire, a series of copper coins struck during the period between 969 and 1092 has been distinguished. These series of the Anonymous Folles are divided into eleven classes, the main characteristic feature of which is that the coins were not struck in the name and effigy of any particular emperor.

It is usually considered that in the above-mentioned period, the series was struck without interruptions. Simultaneously, in the mid-eleventh century, the minting of sight folles was restored by Constantine X.

However, the comprehensive analysis of the coins and historical occurrences allows us to assume that the series was struck with some intervals between 969-1092.

This paper presents a new chronological approach of the Anonymous Folles which can certainly change our knowledge on Byzantine coinage.

Արսեն Մարտիրոսյան

Դաշտադեմի ամրոցի 2015 թվականի պեղումներով հայտնաբերված կենցաղային քարե առարկաների տնտեսական բաղադրիչի շուրջ

Բանալի բառեր՝ *հնագիտություն, միջնադար, տնտեսություն, մթերքի վերամշակում, կենցաղային և աշխատանքային քարե գործիքներ:*

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը 2015 թ. պեղումներ իրականացրեց Արագածոտնի մարզի Դաշտադեմ գյուղում գտնվող միջնադարյան ամրոցում՝ Զաքարյան շրջանի պարսպաշարի և գլխավոր կամարակապ մուտքի միջև ընկած տարածքում: Հայտնաբերված հնագիտական հավաքածուում (արձանագրություններ, խաչքարեր, տապանաքարեր, մետաղե, խեցեղեն և ապակե գտածոներ) մեզ զբաղեցնող խնդիրը ավելի քան չորս տասնյակ կենցաղային քարե տարաբնույթ առարկաներն են, որոնց նկարագրության և դասակարգման ընթացքում առանձնակի ուշադրություն ենք դարձնելու դրանց գործառույթին, տնտեսական այս կամ այն բնագավառին պատկանելու հարցերին:

Ըստ Հայաստանի և հարևան երկրների տարաբնույթ հուշարձաններից հայտնաբերված զուգահեռ նյութի համեմատության՝ Դաշտադեմի ամրոցի կենցաղային ու արտադրական քարե առարկաների հավաքածուն թույլ է տալիս բնութագրել տնտեսական մշակույթի որոշ ոլորտներ, ինչպես օրինակ՝ մթերքի վերամշակման փուլերը, արհեստագործության մի քանի ճյուղերի տնայնագործական բնույթը՝ վերականգնելով գյուղական տիպի բնակավայրի կենսագործունեության որոշ կողմեր և արտադրության հիմնական ուղղությունները:

Arsen Martirosyan

Towards the Economic Component of Stone Household Items Found during the Excavations of Dashtadem Fortress in 2015

Keywords: *Archaeology, Middle Ages, economy, food processing, household and working stone implements.*

In 2015, the expedition of the Institute of Archaeology and Ethnography NAS RA carried out excavations in the territory of the medieval fortress in Dashtadem village, in the Aragatsotn region. The area of the excavations includes the territory between the main arched entrance and eastern and north-eastern part of the first defensive walls of Zakarid period. Among the unearthed cultural materials (inscriptions, cross-stones, gravestones, ceramic, metal and glass artifacts), there were found more than four dozens of habitual stone items. During the description and classification of stone tools we pay more attention to their function in the various economic-habitual aspects.

Based on comparisons with assemblages from other medieval sites of Armenia and neighboring countries, the collection of household and production stone implements of the Dashtadem fortress allows us to demonstrate some aspects of the economic culture, both the stages of food storing and processing, and the homemade forms of various crafts, recovering the subsistence patterns of a rural settlement.

Աննա Տարասովա

Ռուսաստանի հին քաղաքների բնակչության ուսումնասիրությունը՝ հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերված մարդաբանական նյութի հիման վրա

Բանալի բառեր ՝ *հին ռուսական քաղաքների հնագիտություն, քաղաքային բնակչություն, պալեոպաթոլոգիա, մարդաբանություն:*

20-րդ դարի վերջին երկու տասնամյակում առավել կարևորվեց մարդաբանության դերը պատմական քաղաքների էկոլոգիայի վերաբերյալ տարբեր հարցերի պարզաբանման գործում: Տնտեսական և գաղափարաբանական կյանքի կենտրոնացումը քաղաքներում, բնակչության թվաքանակի աճը, նաև սոցիալական բևեռացումը, արհեստների և առևտրի կենտրոնացումն, իրենց ազդեցությունն ունեցան պալեոբնակչության կենսաբանական բնութագրի վրա: Մասնավորապես, այժմ ուսումնասիրվում են սննդակարգի ազ-

դեցությունը քաղաքային բնակչության աճի տեմպերի վրա և ֆիզիկական զարգացման մակարդակը: Միաժամանակ հետազոտության առարկա է քաղաքային բնակչության գենետիկական կառուցվածքը՝ կապված ամուսնական հարաբերությունների փոփոխությունների հետ: Երկու դեպքում էլ՝ ինչպես խմբային, այնպես էլ անհատական մակարդակներում, դրանք տեղեկությունների աղբյուր են պալեոպաթոլոգիայի համար, որի օգնությամբ գնահատվում է ընդհանուր համաճարակային իրավիճակը և բացահայտվում են շրջակա միջավայրի բացասական երևույթները:

Այսպիսով, մարդաբանության համագործակցությունը հնագիտության հետ, թույլ է տալիս բացահայտել ոչ միայն բնակչության տարբեր խմբերի ծագման խնդիրը, այլև վերականգնել պալեոբնակչության ապրելակերպը, հասարակության սոցիալական կառուցվածքը, գնահատել նրանց բարեկեցության մակարդակը, և կենսակերպին վերաբերող բազմապիսի այլ հարցեր:

Anna A. Tarasova

Studying the Population of Ancient Russian Cities Based on Anthropological Materials from Archaeological Excavations

Keywords: *Archeology of ancient Russian cities, urban population, paleopathology, anthropology.*

Since the last two decades of the twentieth century, the anthropological source has taken an important place in solving the problems of historical urban ecology.

The influence of concentration of economic and ideological life, increased population density and its social differentiation, the concentration of trade and crafts in cities is reflected in the biological characteristics of paleopopulations. In particular, the influence of the dietary habits of urban residents on growth processes and the level of physical development as a whole are now being discussed. Transformation of the genetic structure of urban populations is also

investigated in connection to changes in the nature of marital relations. A separate source, both at the population level and at the individual level, is the data of paleopathology, with the help of which the overall epidemiological situation is assessed and specific negative factors of the environment are identified.

In general, the contact of anthropological science with archaeology allows, at the present stage, to solve not only the issues of the origin of different groups of the population, but also to restore the way of living, the social differentiation of societies, to assess the degree of their well-being and to study many other aspects of life.

Դիաննա Միրիջանյան, պ.գ.թ.
Սոսե Աղայան

Գնթունյաց իշխանական տան տիրույթներն, ըստ տապանաքարային վկայագրերի

Բանալի բառեր՝ *վաղ միջնադար, Նիգ գավառ, Գնթունիներ, տապանաքար, արձանագրություն:*

Զեկուցման խնդիրն է ներկայացնել Այրարատ նահանգի Նիգ գավառի տեր Գնթունի իշխանների տիրույթները՝ հիմք ընդունելով տոհմի ներկայացուցիչների տապանաքարերը:

Գնթունյաց իշխանական տոհմի մասին առաջինը հիշատակում է պատմահայր Խորենացին՝ իշխանական տան տիրույթները տեղակայելով Նիգ գավառում: Այս տեղեկությունը հաստատվեց նաև վիմագրական տվյալներով, երբ 1908 թ. Գ. Հովսեփյանը Ապարանում հայտնաբերեց Հայոց արքա Տրդատ 2-րդի հունարեն արձանագրությունը, որտեղ խոսվում է Նիգը որպես տոհմական կալվածք Գնթունյաց տոհմին նվիրելու մասին: Ըստ Աշխարհացույցի՝ Նիգը Այրարատ նահանգի տասնիինգերորդ գավառն էր և տարածվում էր Քասախ գետի վերին հոսանքում:

Նիգում Գնթունիների ակտիվ շինարարական գործունեության մասին խոսում են վիմական տվյալները, որոնք պահպանվել են հոգևոր կառույցների պատերին:

Գնթունիների տիրույթների հստակեցման համար կարևոր նշանակություն ունեն նաև տվյալ տոհմի տապանաքարերը, քանզի իշխանական տան ներկայացուցիչները կարող էին հովանավորել նաև այլ տարածքներում գտնվող հոգևոր կառույցների շինարարությունը, բայց, որպես կանոն, պետք է հանգչեին իրենց տոհմական տիրույթներում:

3-7-րդ դդ. Նիգ գավառում տեսանելի է իշխանական տան ակտիվ ներկայությունը, ինչը փաստվում է նաև տապանաքարերի առկայությամբ: Օրինակ, Գնթունիներից մեկի տապանաքարը գտնվել է Զովունիի Ս. Վարդան եկեղեցու հյուսիսային որմնախարսխի վրա: Զովունիի կիրճից հայտնի է Դավիթ Գնթունու տապանաքարը, որն այժմ պահվում է Հայաստանի պատմության թանգարանում: Մեկ այլ արձանագիր շիրմաքար այժմ գտնվում է Եղիպատրուշ գյուղում:

Հետաքրքիր է, որ 7-րդ դարից հետո Նիգ գավառում Գնթունիների գործունեությունը փաստող որևէ վկայություն չկա, ինչը, ենթադրաբար, պայմանավորված էր արաբական ավերիչ արշավանքներով: Արդեն 9 դ. հետո Գնթունիները հայտնվում են Գուգարքում, ինչի մասին վկայում է Գոգարանի վաղմիջնադարյան եկեղեցու հարևանությամբ հայտնաբերված արձանագիր տապանաքարը: 9-10-րդ դդ. թվագրվող շիրմաքարը հիմք է տալիս ենթադրելու, որ 7-րդ դարից հետո Գնթունիները կորցնելով իրենց իշխանությունը և տիրույթները Նիգ գավառում, տարածվել են դեպի հյուսիս՝ Բագրատունիներից տարածքներ ստանալով Տաշիր գավառում:

Diana Mirijanyan, Ph.D.
Soseh Aghaian

The Domains of the Princely House of Gntuni, According to the Gravestone Inscriptions

Keywords: *Early Middle Ages, Nig region, Gntuni, gravestone, inscription.*

Based on the inscriptions on the gravestones of the representatives of the princely family of Gntuni, the report aims to represent the domains of Gntuni rulers, who were the owners of Nig *gavar* in Ayrarat province.

In historical sources the princely house of Gntuni was first mentioned in the History of Movses Khorenaci, locating their domains in the Nig region. This

information was also confirmed by epigraphic data. In 1908, G. Hovsepyan found the Greek inscription of Armenian king Trdat II in Aparan, informing about the donation of the Nig gavar to Gntuni family as their own domain. According to the *Ashkharhacuyc* of Anania Širakaci, Nig was the 15th region of the Ayrarat province and occupied the territory of the upper stream of the Kasakh river.

The epigraphic data, which have been preserved on the walls of different religious buildings, evidence the intensive construction activity of the princes of Gntuni in the Nig *gavar*.

The gravestones of Gntuni rulershave have also important significance to clarify the borders of their domains, as the representatives of the ruling family could sponsor the construction of religious buildings in the other provinces, but, as a rule, they should be buried in their own domain.

The activity of the princely house of Gntuni is visible in the Nig region in the 3th-7th centuries, which is also evidenced by the presence of gravestones. One of the gravestones was found on the northern side of the base of the St. Vardan church of Zovuni, the other with the name of David Gntuni is known from the Zovuni canyon, which is now kept in the History Museum of Armenia. Another inscribed gravestone is now in the village of Yeghipratush.

Interestingly, there is no evidence about the activity of Gntuni princes in Nig gavar after the 7th century, probably, due to the Arab invasions. Later, in the 9th century, Gntuni family was reappeared in Gugark region, which is evidenced by an inscribed gravestone found near the early medieval church in Gogaran. The gravestone dated to the 9th-10th centuries which allows us to suppose, that after the 7th century the princely house of Gntuni lost its control and domains in the Nig region and moved to the North` receiving territories from Bagratids in the Tashir region.

Տիգրան Ալեքսանյան

Անգեղակոթի կոթողային հուշարձանները և Վարդան Մամիկոնյանի գերեզմանի տեղորոշման խնդիրը

Բանալի բառեր՝ *վաղ միջնադար, պեղումներ, հուշակոթող, Վարդան Մամիկոնյան, մատուռ-եկեղեցի, սրբավայր:*

Անգեղակոթ գյուղը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, Սիսիան քաղաքից մոտ 10 կմ հյուսիս-արևմուտք, Որոտանի ձախափնյա սարավանդին: Գյուղը Սյունյաց աշխարհի հնագույն բնակավայրերից է, ինչի մասին են վկայում նրա տարածքում առկա տասնյակ հուշարձանները՝ սկսած բրոնզ-երկաթե-դարյան դամբարաններից մինչև ուշմիջնադարյան եկեղեցիները: Գյուղից մոտ 0,5 կմ արևմուտք, դեպի Նախիջևան տանող ճանապարհի եզրին՝ պատմական Շաղատ գյուղի հանդիպակաց ժայռերի տակ, պահպանվել է բազմիցս վերաշինված, այժմ կիսավեր Ս. Վարդան Զորավար եկեղեցին: Տեղաբնակների շրջանում պահպանված ավանդության համաձայն՝ այս սրբավայրում է հանգչում Վարդան Մամիկոնյանի մարմինը, որն այստեղ են բերել Ավարայրի ճակատամարտից նահանջող հայոց զորաջոկատները (451 թ.):

Վարդան Մամիկոնյանի գերեզմանի տեղորոշման խնդրով հիմնականում զբաղվել է պատմաբան, հնագետ Մորուս Հասրաթյանը, որի կարծիքով նշանավոր զորավարը կարող էր թաղված լինել վերոնշյալ սրբավայրում՝ վաղմիջնադարյան Սյունիքի հոգևոր և քաղաքական կենտրոն Շաղատի հարևանությամբ: Այդ նպատակով 1960-ական թթ. Մ. Հասրաթյանը նաև կարճատև պեղումներ է իրականացրել խնդրո առարկա հնավայրում, որոնց արդյունքում հայտնաբերվել են վաղ միջնադարում Հայաստանում տարածված հուշակոթող-մահարձանի մնացորդներ: Վարդան Մամիկոնյանի գերեզմանի տեղորոշման խնդիրը և հատկապես դրա հնարավոր վայրի մասին Մ. Հասրաթյանի առաջ քաշած վարկածը դարձել է նաև մեր հետազոտության առարկան: Դրանով պայմանավորված և առկա իրավիճակին տեղում ծանոթանալու նպատակով՝ 2017 թ. հետախուզական գիտարշավ կատարեցինք դեպի Անգեղակոթի հիշյալ հնավայր:

Սույն հաղորդմամբ փորձ է արվում քննության առնել Ս. Վարդան Զորավար սրբավայրում Մ. Հասրաթյանի պեղումներով հայտնաբերված քարակոթողները և մեր կողմից, տեղում փաստագրված արտեֆակտերի մանրամասները, դիտարկել հուշարձանի կառուցման փուլերը, նրան հարող պատմահնագիտական միջավայրը, դրանց աղբյուրագիտական արժեքը և կարևորությունը՝ Վարդան Մամիկոնյանի գերեզմանի տեղորոշման համատեքստում:

Tigran Aleksanyan

Memorial Monuments in Angeghakot and the Problem of Location of the Grave of Vardan Mamikonyan

***Keywords**: Early Middle Ages, excavations, memorial, Vardan Mamikonyan, chapel, sanctuary.*

Angeghakot village is located about 10 km to the north-west of Sisian, on the left bank of Vorotan river, in the Syunik region, RA. The village is one of the ancient settlements of Syunik, evidenced by dozens of monuments scattered throughout its territory, beginning from the Bronze and Iron Age tombs to the late medieval churches. About 0.5 km to the west of the village, on the edge of the road leading to Nakhichevan, under the rocks in front of the historical village Shaghat, there is a repeatedly rebuilt, now destroyed S. Vardan Zoravar church. According to the legend, preserved among the local population, the body of Vardan Mamikonyan rests in this sanctuary, which was brought here by the Armenian troops that had retreated from the battle of Avarayr (451).

The problem of location of the grave of Vardan Mamikonyan was discussed by the historian and archaeologist Morus Hasratyan. He suggests that the famous commander could be buried in the above mentioned sanctuary, in the neighborhood of Shaghat, a spiritual and political center of the early medieval Syunik. For that purpose in the 1960s, M. Hasratyan carried out short-term excavations at the site. The remnants of monuments which were popular in early medieval Armenia were unearthed during the excavation. The problem of location of the grave of Vardan Mamikonyan and especially the hypothesis of M. Hasratyan are the main subjects of our research. Thus, in 2011we carried out a survey at this site, to get acquainted with the situation on the spot.

This report attempts to research the remains of the monuments excavated by M. Hasratyan and the details of artifacts, recorded during our survey, building stages and historical and cultural context of the monument, the value and importance of sources for the case of the location of the grave of Vardan Mamikonyan.

Ելենա Վասիլյեվա

Քաղաքային և վանական գերեզմանատների հնագիտական ուսումնասիրությունն արդի Ռուսաստանում

Բանալի բառեր՝ *հնագիտություն, պատմական գերեզմանոց, եկեղեցու բակ, քաղաքային գերեզմանոց, վանական գերեզմանոց:*

Եկեղեցական և քաղաքային գերեզմանատները Ռուսաստանում ուսումնասիրվում են 19-րդ դարից սկսած: Հետազոտությունների արդյունքում բազմաթիվ տեղեկություններ են հավաքվել ինչպես մեկ մասնավոր թաղման, այնպես էլ խմբակային թաղումների, ննջեցյալի հետ դրված իրերի, գերեզմանային կառույցների մասին: Թաղման համալիրների առավել ուսումնասիրված բաղադրիչներից են տապանաքարերը:

Վանական գերեզմանատների հնագիտությունը՝ որպես ինքնուրույն գիտական ուղղություն, սկսվել է 1980-ական թթ.: Այժմ հրապարակի վրա առկա են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք նվիրված են վանական գերեզմանատների տեղադրությանը, կամ պատմական անհատների թաղումներին: Միաժամանակ զարգանում են այն մեթոդները, որոնց օգնությամբ հետազոտվում և պահպանվում են վանական գերեզմանատները:

Վերջին 15 տարիների ընթացքում պեղումներ են իրականացվում ինչպես Մոսկվայի և հարակից շրջանների վանքերի և եկեղեցիների տարածքում (Զաչատիևսկի, Նովո-Երուսալիմսկի, Նովոդեվիչի վանական համալիրներ, Տրինիտի-Սերգիուս Լավրա), այնպես էլ Ռուսաստանի եվրոպական մասի տարբեր շրջաններում, այդ թվում՝ Կիրիլլո-Բելոզերսկի, Սոլովեցկի, Ֆերապոնտով, Սպասո-Ելեազարովսի, Մալսկի, Պանտելեիմոնով, Միխայլո-Կլոպսկի, Դերեվյանսկի և Նովգորոդի, Տվերի, Արխանգելսի, Վոլոգդայի, Վլադիմիրի, Պսկովի, Նիժնի Նովգորոդի, Յարոսլավսկիի շրջանների բազմաթիվ այլ վանքերում: Ուսումնասիրություններ են կատարվում նաև Սանկտ Պետերբուրգում և Լենինգրադի նահանգում:

2013 թ. մշակութային ժառանգության պահպանության օրենսդրության մեջ կատարված փոփոխության հիման վրա հնագիտական հուշարձաններ

համարվեցին նաև 100 տարի առաջ կառուցված շինությունները: Ուստի՝ այժմ հնագիտական ուսումնասիրության առարկա են նաև 18-րդ դարի և 19-րդ դարասկզբի գերեզմանատները: Միաժամանակ, ընդհանրացնող աշխատություններ են հրատարակվում նվիրված վանքերի, եկեղեցիների և դրանց գերեզմանատների հնագիտական հետազոտությանը: Ստեղծվել է նաև ժամանակագրական աղյուսակ՝առանց ուղեկցող իրերի թաղումների թվագրման համար:

Elena E. Vasileva

Archaeological Study of Churchyards and Monastic Necropolises in Russia Today

Keywords: *Archaeology, historical necropolis, churchyard, city cemeteries, monastery`s necropolises.*

Churchyards and city cemeteries are explored in Russia since the 19th century. As a result of these research was received information about one particular burial or a group of burials, grave goods and burial`s structure. One of the most studied elements of the burial complex was the gravestones.

Archaeology of the monastery`s necropolises has begun as an independent scientific direction since the 1980s. Now there are many researches which are dedicated to the localization of monastic necropolises and burials of historical individuals. At the moment, special methodological recommendations for the study and preservation of monastic necropolises are developed.

During the last fifteen years, archaeological works have been carried out on the territories of monasteries and churches not only in Moscow and the Moscow Region (Zachatievsky, Novo-Ierusalimsky, Novodevichy monasteries, the Trinity-Sergius Lavra), but also in other regions of the European part of Russia, among them: Kirillo -Belozersky, Solovetsky, Ferapontov, Spaso-Eleazarovsky, Malsky, Panteleimonov, Mikhailo-Klopsky, Derevyanitsky and other monasteries in Novgorod, Tver, Arkhangelsk, Vologda, Vladimir, Pskov, Nizhny Novgorod, Yaroslavskoy areas; In St. Petersburg and the Leningrad region.

In 2013 there were changes in legislation in the field of protection of cultural heritage sites. The age of archaeological sites became one hundred years. So the necropolises from the XVIII to the beginning of XX centuries are the subject of archaeological study now.

At the moment, general works about archaeological research of monasteries, churches and their necropolises are published. Also, a chronological scale for burials without grave goods is created.

Արման Նալբանդյան

Նորահայտ տապանաքարեր Հավուց թառից

Բանալի բառեր՝ *հնագիտություն, միջնադար, Հավուց թառի վանական համալիր, Բլրի եկեղեցի, գերեզմանոց, տապանաքար, արձանագրություն:*

Հավուց թառի «Բլրի» եկեղեցու շրջակայքում 2015 թ. իրականացված հնագիտական աշխատանքների արդյունքում բացի ճարտարապետական ու հնագիտական գտածոներից հայտնաբերվեցին նաև մի շարք վիմագրեր, որոնք աղբյուրագիտական արժեք ունեն:

Վաղուց հայտնի փաստ է, որ Բլրի եկեղեցու շուրջը գոյություն ունի միջնադարյան գերեզմանոց, որտեղ հիմնականում թաղվել են վանքի միաբանության անդամները: Պեղումները պարզեցին, որ գերեզմանոցը տարածվում է եկեղեցուց արևմուտք, հյուսիս և հյուսիս-արևելք: Եկեղեցու շուրջ բացվեցին բազմաթիվ տապանաքարեր, որոնք պատել են գետնի զրեթե ողջ մակերեսը: Նախկինում հայտնի մի քանի տապանաքարերի հետ միասին սրանց թիվը հասավ շուրջ հարյուրի: Տապանները գտնվում են եկեղեցու հիմքերին հավասար մակարդակում և համաժամանակյա են եկեղեցու հիմնադրմանը և գործունեությանը: Տապանաքարերի գերակշիռ մեծամասնությունը ուղղանկյունաձև են, հարթ, հստակ մշակումով: Տապանաքարերից արձանագիր էին միայն 22-ը: Տապանագրերի մեծ մասը համառոտ հիշատակագրություններ են, որոնք հայտնում են ննջեցյալի անունն ու հոգևոր աստիճանը: Կան նաև բավական ընդարձակ և տեղեկատվությամբ հարուստ օրինակներ, որոնց հիման վրա փորձ է արվում հստակեցնել

ննջեցյալների ինքնությունը, «Բլրի» եկեղեցու և հարակից մատուռների անունները, կառուցման ժամանակաշրջանը և այլ մանրամասներ:

Սալատապանների ժամանակագրական սահմանները թեև դժվար է որոշել, սակայն Բլրի եկեղեցու պարագայում, հատկապես պեղումների և շերտագրության արդյունքում կարելի է ասել, որ այստեղ դրանց հնագույն սահմանագիծ կարելի է համարել XIII դարի առաջին քառորդը, իսկ վերջնասահմանը՝ XIV դ. վերջերից XV դարի սկզբները:

Arman Nalbandyan

Newfound gravestones from Havuts Tar Monastery

Keywords: *Archaeology, Middle Ages, Havuts tar monastery, Blri (hill) church, cemetery, gravestone, inscription.*

In 2015, as a result of archaeological excavations in the area of the *Blri* (Hill) church of the monastic complex of Havuts Tar, besides the architectural and archaeological findings, there were found also a number of inscriptions which have historical significance.

It is known that there was a medieval cemetery near the church, where mostly the members of the conventual community were buried. The excavations revealed that the cemetery extends to the West, North and North-East of the church. A number of gravestones was discovered which covered almost entire surface of the adjacent area. The number of gravestones counts a hundred with the newly unearthed ones. Only 22 gravestones are inscribed. The great part of the inscribed gravestones has short inscriptions with the name and clergy status of the deceased. There are some samples with large texts which inform about the identity of the deceased, the names of *Blri* church and surrounding chapels, their construction dates and other details. The gravestones are located on the same level of the base of the church and dates to the same period of its establishment and activity. The great part of gravestones is rectangular with flat surface.

It is difficult to determine the chronological boundaries of the gravestones. Based on the results of archaeological materials and stratigraphy, we can suppose

that the cemetery dates to the first quarter of the XIII century to the beginning of the XV century.

Սուսաննա Աղամյան, պ.գ.թ.

Նորահայտ վիմագրեր Մարտունու տարածաշրջանից

***Բանալի բառեր*`** *Գեղարքունիքի մարզ, Նոր Բայազետ, Մարտունի, նորահայտ վիմագիր, հուշարձան, ճանապարհորդ-տեղագիր, դիվան:*

ՀՀ Գեղարքունիքի մարզն ունի հարուստ պատմամշակութային ժառանգություն: Դեռևս XIX դարում նախկին Նոր Բայազետի շրջանն ուսումնասիրվել է հայ և օտարազգի ճանապարհորդ-տեղագիրների կողմից, ապա առավել հիմնավոր հետազոտվել վերջին տարիներին: Հատկապես մարզի վիմական արձանագրությունների հավաքագրումն ու հրատարակությունը, որն իրականացվեց անվանի վիմագրագետ Ս. Բարխուդարյանի ջանքերով («Դիվան հայ վիմագրության», պրակ IV, Գեղարքունիք, Եր., 1973), նոր երանգ հաղորդեց տեղի պատմությանն ու մշակութային ժառանգության համահավաք նկարագրին: Այդուհանդերձ, հրատարակված նյութն ամբողջական չէ և ունի լրացումների կարիք, որին էլ միտված են վերջին տարիներին՝ մարզում իրականացվող վիմագրագիտական ուսումնասիրությունները՝ նոր վիմագրեր հայտնաբերելու նպատակով: Արդյունքում, Մարտունու տարածաշրջանի հիմնականում կոթողային հուշարձաններից մեզ հաջողվեց գրառել ավելի քան 40 վիմագիր: Դրանցից խնդրո առարկա 6-ն են, որոնք ընդօրինակված են Ձորագյուղ, Վերին Գետաշեն և Արծվանիստ գյուղերի հուշարձաններից: Դրանցից մեկը բնույթով շինարարական է, հինգը հիշատակագրություններ են՝ հարազատ XIV-XIX դդ.:

Susanna Adamyan, Ph.D.

Newfound Inscriptions in Martuni Region

Keywords: *Gegharkunik marz, Nor Bayazet, Martuni, newfound inscription, monument, traveler, corpus of inscriptions.*

The Gegharkunik marz of the Republic of Armenia is rich ni historical and cultural monuments. Still the 19th century Armenian and foreign traveler-investigators were studying the monuments in the region of Nor Bayazet. The research of the monuments is continuing more comprehensively up to nowadays. The collection and publication of the epigraphic data by the epigraphist Sedrak Barkhudaryan (Corpus of Armenian Inscriptions, IV, Gegharkunik, Yerevan, 1973) shed new light on the description of the historical and cultural heritage of the region. Nevertheless, the published data are not complete and need to be complemented. Our recent epigraphic researches are aimed at finding new inscriptions in Gegharkunik marz. As a result, we recorded more than 40 inscriptions from the Martuni region. In this report we will represent six of them recorded in the villages of Dzoragyugh, Verin Getashen and Artsvanist. One of the inscriptions has constructional, the five - memorial characters. The inscriptions date to the 14th-19th centuries AD.

ԱԶԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ETHNOLOGY

Ռուզաննա Ծատուրյան

Լավաշաթխման ավանդույթների փոփոխությունները Վայոց ձորում

Բանալի բառեր *՝ լավաշ, թոնիր, մշակութային տրանսֆորմացիա, Վայոց ձոր, սոցիալական կառուցվածք:*

Վայոց ձորի մարզի գյուղական համայնքներում հիմնական հացատեսակը լավաշն է: Ավանդաբար այն թխվում էր թոնրում, մեծ քանակով և երկար պահպանվում էր՝ վառելիք, աշխատուժ և ժամանակ խնայելու նկատառումներով: 2016 թվականին Վայոց ձորի 20 գյուղական համայնքներում իրականացված դաշտային ազգագրական աշխատանքների արդյունքները ցույց տվեցին, որ 2000-ական թթ. սկզբից աստիճանաբար թոնիրներին փոխարինում են ինքնաշեն էլեկտրական վառարանները՝ նախատեսված հատուկ լավաշ թխելու համար: Դրանք, ներմուծվելով սկզբնապես հարևան Արարատի մարզից, ներկայումս համատարած պահանջարկ ունեն Վայոց ձորի մարզի բոլոր ընտանիքներում: Այս պահանջարկին ընդառաջ՝ մարզում տեղական մետաղագործ վարպետները պատրաստում են նշված վառարանները, որոնց արժեքը տատանվում է 40.000-55.000 դրամի միջակայքում: Գրանցված կարիքները վկայում են, որ գյուղերում այդ վառարանները իսկական հեղափոխություն են իրականացրել «կանանց ազատագրման» հարցում, քանի որ կտրուկ հեշտացել է լավաշ թխելու աշխատանքը:

Զեկուցման ընթացքում նախատեսվում է քննարկել լավաշաթխման գործընթացում գրանցված այս և ժամանակակից այլ փոփոխությունները: Մասնավորապես, թոնրում լավաշ թխելու ավանդույթի փոփոխության պատճառները, հացաթխման համար թոնրից հրաժարման հանգամանքները, այս գործընթացի դինամիկան և ընթացքը:

Վայոց ձորում լավաշ թխելու գործում փոփոխություններ են գրանցվել նաև տեխնոլոգիական գործընթացում՝ ալյուրի, խմորիչի, խմոր պատրաստելու ժամանակի, չափի, գործիքների կիրառման ավանդույթների փոփոխության առումով:

Այս բոլոր փոփոխությունները չեն շրջանցել տեղական համայնքային և սոցիալական կառուցվածքը: Ավանդաբար Վայոց ձորում լավաշ թխում էին խմբերով՝ կազմված 4-5 կանանցից: Էլեկտրական վառարանների՝ թեկուզ դիպվածային հայտնվելը յուրաքանչյուր համայնքում կարծես սկսում էր խարխլել լավաշ թխողների խմբեր ձևավորելու հնարավորությունը: Այժմ արդեն էլեկտրական վառարաններում լավաշ թխում են 2-3 հոգով՝ տանտիկինը և ընտանիքի անդամներից որևէ մեկը: Այս դեպքում լավաշ թխելն արդեն չի պահանջում ավանդական կամ հատուկ հմտություն, քանի որ անհրաժեշտ է ուղղակի լավաշի բարձիկը, որի վրա փռված է գրտնակած խմորը, շրջել վառարանի թիթեղյա ցանցի վրա: Հաց թխելուն մասնակցում և օգնում են նաև տղամարդիկ և երիտասարդները: Այս նորամուծությունը համայնքներում ընկալվում է որպես անցանկալի տրանսֆորմացիա, քանի որ արդյունքում սահմանափակվում են փոխօգնության, միմյանց հետ շփվելու, լիցքաթափվելու պրակտիկաները: Փոփոխության են ենթարկվում կամ առհասարակ մոռացվում են նաև «լավաշային ծեսերը»՝ թարմ լավաշը բաժանելու, հարսանիքի առթիվ լավաշ թխելու, թոնրի լավաշի հետ կապված զուշակությունները և այլք, որոնք ձևավորում էին տեղական մշակութային ներկապնակը:

Ruzanna Tsaturyan

Transformation of Lavash Baking Traditions in Vayots Dzor Region

Keywords: *Lavash, tonir, cultural transformation, VayotsDzor, social structure.*

Lavash is the main bread in rural communities of the Vayots Dzor Province. Traditionally people baked lavash in earthen ovens (tonirs) for couple of months to save fuel, time and labour force. Lavash baking traditionally is a female activity.

The ethnographic fieldwork materials (in 2016, in 20 rural communities of Vayots Dzor) show that lavash baking traditions has undergone some rapid transformations. Since the 2000s, the tonirs were gradually replaced by special electric stoves for lavash. These new stoves made a ‘‘revolution’’ in women’s lives

they made lavash baking a very easy task compared to the traditional time and source consuming tonir-baking method.

The paper discusses the main transformations in lavash baking tradition: the main reasons behind ''tonir refusal'' are the dynamic of the process and other ethnographic aspects of these cultural transformations.

The transformations touch the technological process of lavash baking, such as the dough making, use of tools, traditional regime of the activity. New ''traditions'' made some shifts in the social order of the communities as well. Gender roles, scope of participants of the process are now changed due to the use of new tools for baking. All these ‘’social’’ shifts are perceived mainly negatively by local people as they reduce cooperation, communication and relaxation possibilities for them. Rituals and other symbolic traditions connected with lavash baking such as sharing fresh baked lavash with neighbors or passers, ritual baking of lavash for weddings, fortune-telling practices which create local cultural pallet are gradually forgotten.

Նարինե Եղիկյան

Պղնձագործ վարպետաց սիրիահայոց դպրոցը

Բանալի բառեր *՝ Սիրիա, Գալէմքէարեաններ, պղնձագործություն, դրոշմակնիք, արտադրամիջոց:*

Հայկական պղնձագործության ուշագրավ էջերից մեկը կերտել են Սիրիայի Հալեպ քաղաքում հաստատված հայ վարպետները: Սիրիայում նրանց գործունեության բազմաթիվ փաստեր կան, սակայն Հալեպը իր նշանակությամբ անհամեմատելի էր: Հայ վարպետների գործունեությանը հանգամանորեն անդրադարձել է Հրազդան Թոքմաջյանը իր «Գալէմքէարեաններ» աշխատության մեջ: Շնորհիվ վերջինիս ջանքերի, կործանումից փրկվել ու մեզ են հասել բազմաթիվ գործեր, որոնք ուսումնասիրության աղբյուր են ոչ միայն արհեստի ու հատկապես պղնձագործության տեսանկյունից, այլև ազգագրական, տոհմի ծագումնաբանական ու վարպետների սերնդային հաջորդականության/ժառանգականության խնդիր-

ները քննելիս: Գալեմքեարյան վարպետների կերտած ստեղծագործություն-ներից բացի ուշագրավ են նրանցից մեզ հասած արտադրամիջոցները, որոնք տեսանելի են դարձնում արտադրության ողջ գործընթացը: Գործիքների պատկառելի հավաքածուն, որտեղ մեծ թիվ են կազմում վարպետների կողմից օգտագործված սալերն ու մուրճերը, վկայում են նրանց աշխա-տանքային հմտությունների և բարձր վարպետության մասին: Հատկա-նշական է շուրջ 150 տարի տոհմի տարբեր վարպետների կողմից անընդմեջ օգտագործած պողպատե կնիքների հավաքածուն և պահպանված դրոշմա-կնիքները:

Narine Yeghikyan

Syrian-Armenian School of Coppersmiths

Keywords: *Syria, Kalemkiarians, coppersmith's craft, stamp, tools.*

One of the remarkable pages of the Armenian coppersmith’s craft was created by the Armenian masters settled in Aleppo, Syria. There are many facts about their activities in Syria, but Aleppo was of incomparable significance. Hrazdan Tokmajyan thoroughly touched upon the activities of the Armenian masters in his work "Kalemkiarians". Many of these art works survived thanks to his efforts. Now we study them not only from the point of view of art and especially coppersmith’s craft, but also as a source of research while examining the problems of ethnography, genealogy, succession of masters generations, heredity. In addition to the works created by Kalemkiarian masters, the tools that reached us are quite remarkable, as they make the whole production process visible for us. The large collection of the tools which includes a great number of plates and hammers used by the masters testify their great working skills. The collection of steel stamps and seals which has been used by different masters of this family for 150 years is also quite striking.

Հայարփի Անանյան

Հայ ավանդական պարերը իրանահայերի շրջանում: Փերիա գավառ (Բանահավաք Ռուդիկ Հարոյանի գրառած պարերի հիման վրա)

Բանալի բառեր՝ *իրանահայ, պարարվեստ, պարային քայլ, պարեղանակ, պարի բովանդակություն, կատարողների կազմ, Փերիա:*

Զեկուցման մեջ ներկայացվելու է Իրանի հայաբնակ Փերիա գավառի ավանդական պարային մշակույթը: Թեև իրանահայոց մշակույթի ոլորտում որոշակի ուսումնասիրություններ կատարված են, բայց, կարծես թե, ավանդական պարերին անդրադարձերը միայն փոքրիկ ակնարկներով են և ոչ ամբողջական: Շատ դեպքերում հանդիպում ենք միայն թվարկված պարանունների՝ առանց պարեղանակի, պարային քայլերի գրառման: Շատ հազվադեպ նշվում են պարի կատարման տեղը, ժամանակը, կատարողների կազմը: Ահա եղած նյութերն առավել համապարփակ դարձնելու, ամբողջականացնելու միտումով առաջին քայլերն ենք ցանկանում կատարել՝ ներկայացնելով Փերիա գավառի հայ ավանդական պարերի առանձնահատկությունը, բովանդակությունը, պարողների կազմը, տարիքը, և դրանց կատարումները՝ ժամանակակից ավանդական խմբերի մեկնաբանմամբ: Միևնույն ժամանակ, կփորձենք համեմատել բեմական փոփոխությունները և աղավաղումները՝ դրանք համեմատելով բնօրինակի հետ:

Թեմայի արդիականությունն այն է, որ այս շրջանի պարերը դեռևս գիտական վերլուծության չեն ենթարկվել: Պարերի որոշ նմուշներ փրկվել են, որոնք թույլ կտան ուսումնասիրել Փերիայի ավանդական պարարվեստը և դնել գիտական շրջանառության մեջ: 1980-ական թթ. մշակութապահպանման մղումով իրանահայոց պարարվեստը ներկայացնող մի քանի ավանդական պարի խմբեր ձևավորվեցին, որոնց ղեկավարներն իրանահայ էին կամ հաճախ, ամբողջ խումբը կազմված էր պարը կրող իրանահայերից: Հենց այս խմբերի անդամներն էլ մեր ուսումնասիրությունը լրացնողներն են՝ իրենց հիշողություններով: Ուսումնասիրության համար օգտվել ենք նաև պ.գ.թ., պարագետ Ժ. Խաչատրյանի հիմնադրած (1983թ.) Աշտարակի «Փերիա» (փերիահայերից կազմված) խմբի տեսանկարահանումներից, 1988

թվականից նույն խմբի գեղարվեստական ղեկավար, բանահավաք, պարագետ Ռուդիկ Հարոյանի տեսանկարահանումներից և նրա անձնական նախաձեռնությամբ կատարած բանահավաքչական անտիպ նյութերից, որոնցում ընդգրկված են շուրջ մեկ տասնյակից ավել պարային նմուշ: Այս գրառումներն առանձնակի օգտակար կլինեն հետազոտության համար, քանի որ գրառված են պարն ուսումնասիրելու և վերականգնելու գրեթե բոլոր բաղադրիչները՝ պարի անունը, պարային քայլերը, ձեռքերի բռնվածքը, պարողների կազմը: Առկա են նաև պարեղանակների աուդիո ձայնագրությունները: Հոդվածում ընդգրկել ենք Ռ. Հարոյանի գրառած միայն մի քանի պար՝ Արշավապար, Չուբբազի՝ փայտապար, Արշալույսի՝ թաշկինակներով պար և այլն:

Hayarpi Ananyan

Armenian Traditional Dances Among Iranian-Armenians. Peria Province (Based on the Dancesrecorded by Folklorist Rudik Haroyan)

Keywords: *Dancing art, Iranian-Armenians, dance, dance steps, dance music, dance content, the number of the performers, Peria.*

The paper covers the traditional dance culture of the Armenian-populated region of Peria in Iran. Though certain studies have been carried out in the field of the culture of the Iranian Armenians, the traditional dances have not been observed deeply enoughm and the references on them are not complete. There are a lot of cases when we come across the listed names of the dances but the dance songs and the recorded dance steps are not available. The place and the time of the performed dances or the number of the performers are mentioned in very rare cases. So, with the intention to make the available material more comprehensive and complete we aim to make the first steps to introduce the contentand the peculiarities of the traditional Perian dances, as well as the number and the age of the performers.

The introduction of the present paper deals with the interpretations of the dances by the modern traditional dance groups. Parallelly, we try to figure out the

changes and distortions of the dances during staged performances in comparision with the original ones.

Some of the preserved dance examples allow us to observe the traditional dance art of Peria and put it into scientific circulation. In 1980s, several traditional dance groups were formed to preserve the dance art of the Iranian Armenians. In some cases, not only the leaders but also all the members of the group were Iranian-Armenians. So, the members of these groups and their memories on the dances were our additional source to study the Perian dances. We also used video recordings of "Peria" group founded by Dr. Zhenya Khachatryan in 1983, and the recordings of the same group done by its artistic director, folklorist Rudik Haroyan in 1988. Rudik Haroyan's unpublished personal folk archive, which contains over a dozen samples of dances, served as the most essential source for the study of the Perian dances.

Գայանե Հակոբյան

Սիրիահայերի ժամանցի կազմակերպման առանձնահատկությունները ՀՀ-ում

Բանալի բառեր՝ *Հայաստան, սիրիահայեր, ժամանց, անձի զարգացում, սոցիալական կապեր, ադապտացիա, սեռատարիքային ցուցանիշ, զբաղվածության ցուցանիշ:*

Ժամանցը անձի սոցիալական ժամանակի մի մասն է, որը կիրառվում է նրա ֆիզիկական և հոգևոր առողջության պահպանման ու վերականգնման համար: Այն նաև լրացուցիչ հնարավորություն է ստեղծում անձի զարգացման համար և օգնում՝ լուծելու կենսականորեն կարևոր հիմնախնդիրները:

Սույն թեմայի ուսումնասիրության շրջանակներում քննության ենք առել ժամանցի ինտեգրատիվ մոդելը (ամերիկացի հետազոտող Ջ. Կելլի), որում հիմնական խնդիրը դառնում է հետևյալը՝ նպաստում է արդյո՞ք ժամանցը սոցիալական կապերի զարգացմանը կամ անձի կատարելագործմանը:

2012 թվականից ի վեր Սիրիայում տեղի ունեցող պատերազմի պատճառով շատ սիրիահայեր տեղափոխվել են Հայաստան՝ թեպետ իրենց հարազատ էթնիկ, սակայն այլ սոցիալ-մշակութային միջավայր, որտեղ նրանց համայնքային կյանքով և կոմպակտ ձևով ապրելու հնարավորությունը փոքրանում է, սեփական ազգային նկարագիրը պահպանելու անհրաժեշտությանը փոխարինելու է գալիս նոր միջավայրին ադապտացվելու անհրաժեշտությունը: Անխուսափելի է դառնում ոչ միայն նոր գործնական հարաբերությունների, այլ նաև նոր առօրյա և ժամանցային պրակտիկաների ձևավորումը:

Սիրիահայերի ժամանցի ուսումնասիրության նպատակով իրականացվել է էթնոսոցիոլոգիական հետազոտություն՝ խնդիր ունենալով բացահայտել, թե այն որքանով է նպաստում նոր սոցիալական կապերի ստեղծմանն ու սեփական անձի զարգացմանը: Հետազոտությունն իրականացվել է սոցիոլոգիայում կիրառվող քանակական մեթոդաբանությամբ՝ 184 կիսաստանդարտացված հարցազրույց սիրիահայ ընտանիքների շրջանում՝ Երևանում և մարզերում:

Հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ համայնքային կյանքին բնորոշ ժամանցային պրակտիկաները սիրիահայերի հետ միասին տեղափոխվում են Հայաստան, ծավալվում նույն խնդիրներ ու հետաքրքրություններ ունեցող մարդկանց շրջանակներում: Սիրիահայերի համար ժամանցը կարծես դառնում է նպատակային գործունեություն, որն ուղղված է, սակայն, ոչ թե նոր միջավայրում նոր սոցիալական կապերի ստեղծմանն ու զարգացմանը, այլ հին կապերի վերազնահատմանն ու ամրապնդմանը: Ասվածն առավելապես բնութագրական է Հայաստանում բնակվող սիրիահայերի տնտեսապես/սոցիալապես ոչ ակտիվ զանգվածին, միջին տարիքի և իգական սեռի ներկայացուցիչներին: Թեպետ փոքր ծավալով, սակայն սիրիահայերի մոտ առկա է նաև սեփական համայնքից դուրս ազատ ժամանակի կազմակերպման պրակտիկա՝ մասնավորապես որոշակի գործունեությամբ զբաղված տղամարդկանց շրջանում:

Ժամանցի միջոցով սեփական անձի զարգացմանն ուղղված գործունեությունն առավելապես արտահայտվում է նոր միջավայրում որոշ տեսարժան վայրեր այցելելով՝ հարստացնելով հայկական նյութական մշակույթի մասին գիտելիքների պաշարը՝ մի կողմ թողնելով հոգևոր մշակույթը:

Gayane Hakobyan

The Pecularities of Organization of Leisure Time among Syrian Armenians Living in Armenia

Keywords: *Armenia, Syrian Armenians, leisure, self-development, social connections, adaptation, indicator by gender and age, indicator by employment.*

Leisure is a type of social time, which ensures sustainability and reproduction of person's physical and mental health. It is also an additional space for self-development and helps to solve vital problems.

In the framework of the research, we analyze an integrative model of leisure time (American researcher J. Kelly), where the main problem is becoming the following: does leisure time help to develop social connections and assist to self-improvement?

Since 2011 because of the war in Syria a lot of Syrian Armenians moved to Armenia - in the environment with close ethnic, yet different socio-cultural characteristics, where an opportunity to live as one community is shrinking, a necessity to preserve ethnic identity is decreasing, and a necessity to adopt to a new environment is increasing. A development of not only new working relationships, but also an organization of new everyday practices and leisure activities is becoming inevitable.

In order to study practices of leisure time used by Syrian Armenians an ethno-sociological research was conducted with the goal to reveal the impact of new social connections on self-development. The research was conducted using qualitative and quantitative sociological methods. 184 semi-structured and 36 in depth interviews were conducted among families of Syrian Armenians in Yerevan and the regions, in particular in Aragatsotn, Ararat, Armavir, Kotayk and Shirak regions.

The results of the survey show that practices of leisure common for Syrian Armenians back in their communities "move" to Armenia with them. It seems that for many Syrian Armenians leisure becomes a goal-oriented activity, but for the purpose of sustaining and reevaluating old social connections, and not for the establishment and/or development of new social connections. It is more common

for those Syrian Armenians who are not very active socially and economically, and are mostly middle-aged women.

Even though not a lot, but some Syrian Armenian have practices of organizing their leisure time outside of their community, especially men with a certain type of occupation.

Also, Syrian Armenians are doing more of sightseeing and not going to the concerts, movies and theaters.

Դավիդ Լեոպոլդ

Հարավարևելյան Թուրքիան՝ որպես «Դիմադրության մնեմոնիկական տարր». տեղային հիշողության փոխադրիչները և Հայոց ցեղասպանությունը (1915-1916)

Բանալի բառեր *՝ Թուրքիա, տեղային հիշողություն, Հայոց ցեղասպանություն, դիմադրության մնեմոնիկական տարր:*

Հիմնվելով ներկայիս թեկնածուական աշխատանքիս վրա («Կապելով հիշողությունները հակադիր աշխարհագրությանը»), քննարկելու եմ Թուրքիայի *հիշողության քաղաքականության* սահմանափակումները՝ Հայոց ցեղասպանության ընթացքում (1915-1916) գործած կոլեկտիվ բռնությունների վերաբերյալ: Հետևելով մարդաբանական մոտեցմանը՝ կլուսաբանեմ տեղի՝ հիմնականում Թուրքիայի հարավարևելյան քրդական բնակչության հիշողությունը և դրա ներուժը՝ հակազդելու, մարտահրավեր նետելու պաշտոնական *նարատիվին:* Ես կներկայացնեմ բանավոր պատումները, տեղական բարբառով խոսվածները, հիշողության վայրերը և տեղանունները՝ որպես փոխադրիչներ, որոնց շնորհիվ տեղի բնակիչները կարող են հակազդել (ներքևից վերև ուղղությամբ) կոլեկտիվ բռնությունների և «թշնամական ուրիշի» մասին հաստատված *նարատիվներին*: Լոկալ հիշողությունները պետության ճանաչման բացակայության մակարդակում կարող են օգնել, որպեսզի ստեղծվեն *«դիմադրության մնեմոնիկական (հուշամարզական) տարրեր»*՝ ընդդեմ պետական ժխտողական *նարատիվների*, և այդ կերպ առաջացնել ներքևից վերև ներդրում որևէ մեկի բռնական անցյալի վրա:

Զեկուցումը հիմնվում է 2015 թվականին երեք ամիսների ընթացքում Թուրքիայի հարավ-արևելքում հավաքած դաշտային աշխատանքի էմպիրիկ նյութի վրա: Հիմնվելով Շութցեի կենսագրական-նարատիվ հարցազրույցի վրա՝ իրականացրել եմ շուրջ 45 հարցազրույց չորս թուրքական շրջան-ներում՝ Վան, Մուշ, Բիթլիս և Հակկարի: Հարցազրույցների մասնակիցները տարբեր էթնիկ ինքնություն ունեն (քրդեր, ալևի զազաներ, թուրքեր), որոնք նաև տարբեր զբաղվածության և տարիքի ներկայացուցիչներ են, ինչը թույլ տվեց ուսումնասիրել հիշողության զարգացումը թե՛ ժամանակային, թե՛ տարածական հարթություններում: Իմ առաջնորդող հարցը կլինի, թե ինչ-պես է լոկալ հիշողությունը հաղթահարում *millî tarih* (ազգային պատմու-թյան) կողմից առաջ քաշված ընկեր-թշնամի սահմանազատումը, և այդ-պիսով պատմական հաշտեցման մեջ ստեղծում իմաստալից, ներքից վերև ներդրում՝ մետաղալարով ցանկապատված և փակ սահմանների երկայնքով:

David Leupold

Southeastern Turkey as a "Mnemonic Cell of Resistance"?: Vehicles of Local Memory and the Armenian Genocide (1915-1916)

Keywords: *Turkey, local memory, Armenian Genocide, mnemonic cell of resistance.*

Based on my ongoing dissertation on "Bridging Memories on a Contested Geography" I want to discuss in my paper the *limits* of Turkey's politics of memory vis-à-vis the collective violence perpetrated during the Armenian Genocide (1915-1916). Following an anthropological approach, I will shed light on local memory of (mainly) Kurdish residents in South-eastern Turkey and it's potential to produce bottom-up, counter-narratives challenging the official narrative. I will identify *oral narrations, local vernaculars, sites of memory* and *toponomy* as vehicles through which local-dwellers can contest – in a bottom-up direction – established narratives on collective violence and the 'hostile other'. I will argue that local memory can – in the absence of recognition on a state level – favor theemergence of 'mnemonic cells of resistance' against denialist state narratives and, thus, elicit abottom-up engagement with one's violent past.

During my talk I will rely on my own empirical material which I collected in 2015 during a 3-month fieldwork in Southeastern Turkey. Relying on Schütze's method of the biographical-narrative interview I compiled over 45 biographical narrative interviews from four Turkish provinces (Van, Muş, Bitlis and Hakkari). Interview participants comprised different ethnic self-identifications (Kurds, Alevis Zazas, Turks), local affiliations and generations which allows me to explore the evolution of memory in both a temporal and spatial perspective. My guiding question will be if and how local memory accounts can overcome the friend-foe distinction promoted by *millî tarih* (national history) and thusyield a meaningful, bottom-up contribution to historical reconciliation across barbed-wire fences and closed borders.

Հասմիկ Գրիգորյան, պ.գ.թ.

Սննդի հավաքչության եղանակները՝ որպես «բարոյական դիմադրության» ձև Հայոց ցեղասպանության ժամանակ. Երեխաների փորձառությունները

Բանալի բառեր՝ *ցեղասպանություն, երեխաներ, բարոյական դիմադրություն, սնունդ:*

Արդյո՞ք Հայոց ցեղասպանությունը միայն ոչնչացման մասին է: Արդյո՞ք կային հերոսականության ոգի և բարոյական դիմադրություն ընդդեմ այդ տառապանքների և բռնությունների, թե բոլոր զոհերը գնացել են մահվան՝ «ինչպես անմեղ գառներ»: Ի՞նչն է պետք ընդհանրապես որակել որպես դիմադրություն:

Դիմադրության ամենաուղղակի դրսևորումը զինված դիմադրությունն է, բայց և այնպես, հայերի կողմից արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ զոհերը ցուցաբերել են ոչ զինված/բարոյական պայքարի տարբեր ձևեր՝ գոյատևելու և պահպանելու իրենց արժեքները:

Ի տարբերություն Հրեից հոլոքոստի՝ Հայոց ցեղասպանության ուսումնասիրության համատեքստում, բարոյական դիմադրության խնդիրն այնքան էլ ուսումնասիրված չէ: Այդ է պատճառը, որ այս ուսումնասիրությունը հիմնված է համեմատական ցեղասպանագիտության վրա՝ զուգահեռներ

անցկացնելով Հայոց ցեղասպանության և Հրեից հոլոքոստի միջև: Հոլոքոստի ուսումնասիրության շրջանակներում հնարավոր յուրաքանչյուր գործունեություն, որն ուղղված էր նացիստական բռնապետության դեմ, դիտարկվում է որպես բարոյական, հոգևոր կամ ոչ զինված դիմադրություն:

Հայոց ցեղասպանության ժամանակ հոգևոր/բարոյական դիմադրության կարևոր ձևերից մեկը *սննդի հավաքչությունն* է:

Ինչպես գաղթի ճանապարհին, այնպես էլ համակենտրոնացման ճամբարներում հայերը կիրառել են սնունդ հայթայթելու տարբեր եղանակներ: Պետք է նշել, որ սննդի հավաքչության գործընթացում մեծապես ներգրավված են եղել նաև հայ մանուկները:

Այսպիսով՝ զեկուցման մեջ անդրադարձ է կատարվելու սննդի հավաքչության խնդրին՝ որպես բարոյական դիմադրության դրսևորում:

Hasmik Grigoryan, Ph.D.

The Ways of Food Gathering as an Act of "Moral Resistence" During the Armenian Genocide: The Experiences of Children

Keywords: *Genocide, children, moral resistance, food.*

Is the Armenian Genocide only about doom and destruction? Were are the spirit of heroism and moral defense against the suffering and brutality, or the victims went to their death like "sheep to slaughter"?

The question here is what should be classified as resistance at all: what was being resisted and how? The most direct form of opposing is the armed resistance, but at the same time there are many cases ofnon-armed/moral resistanceby victims for surviving and keeping their values.

In the context of the study of the Armenian Genocide the issue of moral resistance is not talked so much as compared to Jewish Holocaust. That's why my research is focused on the Comparative Genocide Studies, analyzing the Armenian Genocide compared to the Holocaust.Every possible activity against Nazi tyranny is considered to be moral, spiritual or unarmed resistance in the context of the Holocaust Study. Gathering food is one of the important acts among various types of spiritual/moral resistance during the Armenian Genocide.

In their ways of exile and in the concentration camps Armenians practiced different ways of getting food. It should be mentioned that in the process of food gathering mostlythe Armenianchildren wereengaged.

Thus, the report is focused on the issue of gathering food as an act of resistance by the children.

Նինո Օքրուացվարիձե, պ.գ.թ.

Թուրքացված վրացիների ինքնության ընկալումները Գումերսբախում (Գերմանիա)

Բանալի բառեր՝ *թուրքացված վրացիներ, արտագաղթ Գերմանիա, տուն, քոչվորություն:*

Արդի աշխարհին առնչվում է սոցիալական, տնտեսական, քաղաքական և կրոնական խտրականության հիմքերով օրինական և ապօրինի միգրացիաների: Միգրանտների քանակն օրըստօրե ավելանում է: Ներկայումս, նրանք հիմնականում տեղաշարժվում են Արևելքից դեպի Արևմուտք՝ Եվրոպա: Միգրացիոն են ոչ միայն ֆիզիկական, այլ նաև մշակութային տեղաշարժերը, որոնց ընթացքում տեղափոխվում են ավանդույթներն ու սովորույթները որոշակի էթնիկության տարածքից մեկ այլ էթնիկական միջավայր: Նոր միջավայրում նրանք առնչվում են նոր իրողության, որը դառնում է երկկեցության և չբավարվածության պատճառ:

Մեր հետազոտությունը վերաբերում է թուրքացված վրացիների միգրացիայի խնդիրներին (1960-ականներ)՝ Թուրքիայի Հայրիյե գյուղից դեպի Գերմանիայի Գումմերբախ: Երեք տարբեր մշակութային պատկանելություններ՝ վրացական, թուրքական և գերմանական, ազդեցություն են թողել և ձևավորել իրականության առօրեականության ընկալման վրա:

Ռուս-թուրքական պատերազմի ընթացքում (1877-78) Աջարիան և Վրաստանի այլ պատմական շրջաններ կցվեցին Ռուսական կայսրությանը: Վրաստանի բնակչության մի մասը մնաց Ռուսական կայսրության մեջ, իսկ մյուս մասը՝ որպես «մուհաջիրներ», տեղափոխվեց Օսմանյան կայսրություն: 1960-ականներին Թուրքիայում գործազրկության բարձր մակարդակի և

Եվրոպական տնտեսության ընդլայնման ընթացքում էժան աշխատուժի պահանջարկի պատճառով Թուրքիան երկկողմանի համաձայնության է գալիս՝ աշխատուժ ուղարկելով Գերմանիա: Մինչև 1974-ը մոտ 1 մլն թուրքեր գնում են արտերկիր՝ արագ հարստանալու հույսով: Մուհաջիրները կրկին հայտնվելով երեք մշակույթների խաչմերուկում, առանց իսկական կամ ժամանակավոր հայրենիքի, իբրև օտարներ արտասահմանում և «իսկական» հայրենիքում՝ երկատված հիշողություններով, փորձում են ստեղծել նոր սկիզբ, ներգրավվելու նոր հայրենիքում՝ Գերմանիայում: Այս միջոցով նրանք փորձում են ձևավորել և պահպանել էթնիկական մշակույթը և ինքնությունը:

Nino Okrostsvaridze, Ph.D.

Perception of Identity among Turkish Georgians in Gummersbach, Germany

Keywords: *Turkish Georgians, migration to Germany, perception of home, nomadism.*

The contemporary world has been facing legal or illegal migrancy, based on social, economic, political, and religious determination. The number of migrants is growing every day. Mostly they are moving from the East to the West or Europe. Movement is not only physical activity, but it is displacement of culture, traditions and customs from one ethnical space to another one. During migration people take with them part of the total culture. On the new soil they encounter new reality, which could be the reason of dual existence, dissatisfaction.

Our research addresses issue of migration of Turkish Georgians in 1960s, from Turkey (Village Hayriye) to Germany (Gummersbach). Three different cultural elements: - Georgian, Turkish and German, influence their mode of life and affect everyday perception of reality.

During the Russo-Turkish War in 1877-78, Adchara and other historical provinces of Georgia were attached to the Russian Empire. One part of the Georgian population came under Russian rule; the other part emigrated as “Muhajirs” to Ottoman Turkey. As a result of living in culturally different countries (Russia, Ottoman Empire), the life ways of the Georgian Muslim communities began to diverge. In 1960s due to high levels of unemployment in Turkey and the need for

inexpensive labour in the expanding economies of Europe, Turkey concluded bilateral agreement to supply workers to Germany. Approximately one million Turks crossed the border up to 1974, hoping to get rich fast. Twofold Muhajirs at the crossroads of three cultures, without (home) land, the real and permanent one, strangers in foreign and "native" land, torn apart by two sorts of memories, try to make a new beginning, to fit in with new "motherland" (Germany) and at this time to maintain ethnic culture, space and identity.

Աննա Նալբանդյան

Թուրքիայի մշակութային քաղաքականությունը Վրաստանում

Բանալի բառեր՝ *մշակութային քաղաքականություն, փափուկ ուժ, թուրք-վրացական հարաբերություններ:*

Պետությունների կողմից հաճախ է օգտագործվում ռազմական կամ տնտեսական ուժը՝ խելամիտ ժամկետներում ցանկալիին հասնելու համար: Ի հակադրություն սրան, *փափուկ ուժի* կիրառումը շատ ավելի բարդ գործընթաց է, քանի որ դրա ռեսուրսների մեծ մասը կառավարությունների վերահսկողությունից դուրս է, իսկ հաջողությունը կախված է այն լսարանի ընդունումից, որին ուղղված է: Այդ է պատճառը նաև, որ *փափուկ ուժի* միջոցով ցանկալի արդյունքին հասնելու համար երբեմն պահանջվում են տարիներ, իսկ դրա լծակները հաճախ աշխատում են անուղղակի՝ հող նախապատրաստելով քաղաքականության համար:

1990-ական թթ. ի վեր թուրք-վրացական հարաբերությունները քաղաքական, տնտեսական, ռազմական և մշակութային ասպարեզներում աստիճանաբար զարգացում են ապրել՝ վերածվելով համագործակցության էներգետիկայի, առևտրի, տնտեսության, անվտանգության, ինչպես նաև մշակույթի բնագավառներում: Վերջին ժամանակներում հետաքրքրություն է նկատվում այս հարցի հանդեպ և արված անդրադարձները մեծ մասամբ վերաբերում են երկու երկրների միջև քաղաքական, ռազմական, տնտեսական համագործակցությանը, սակայն նկատվում է մշակութային

գործընթացների, դրանց ունեցած դերի վերաբերյալ ուսումնասիրությունների պակաս: Ներկա զեկուցման մեջ փորձ է արվում լրացնել այս բացը՝ սահմանելով ԽՍՀՄ փլուզումից ի վեր Վրաստանում Թուրքիայի կողմից *փափուկ ուժի* կիրառումը, դրա արտահայտման միջոցները, բաղադրիչները, գաղափարական շրջանակները: Որպես հոդվածի մեթոդաբանական հիմք է ընդունվում Ժոզեֆ Նայի՝ *փափուկ ուժի* մասին տեսությունը:

Anna Nalbandyan

Cultural Policy of Turkey in Georgia

Keywords: *Cultural policy, soft power, Turkish-Georgian relations.*

States often use military or economic power to achieve the desired outputs in a reasonable timeframe. However, the use of soft power is a much more complicated, as well as time-consuming process for most of its resources are beyond governmental control, and the success depends on the acceptance of the audience. This is another reason why sometimes it takes years to achieve the desired results by means of soft power, with levers often working indirectly, preparing ground for governmental politics.

Since the early 1990s Turkish-Georgian relations have developed in political, economic, military and cultural spheres, gradually turning into energy, trade, security cooperation. Although the issue has gained growing interest, most of the references relate to political, military and economic cooperation between the two countries. Still, there is lack of research in cultural processes and their role. In the current article, an attempt has been made to fill this gap, focusing on the use of Turkish soft power in Georgia (including its forms, expression, and elements) observable since the collapse of the USSR. The methodological basis of the article is Joseph Nye’s theory of soft power.

Գարեգին Գրիգորյան

Էթնիկության դրսևորումները Տավուշի սահմանային համայնքներում

Բանալի բառեր՝ *էթնիկ ինքնություն, սահմանամերձ բնակավայրեր, էթնոցենտրիզմ, կարծրատիպ:*

Հայ-ադրբեջանական հակամարտությունն անկախության շրջանում իր կնիքն է թողել հասարակության էթնիկ ինքնության վրա, որն էլ ավելի ընդգծված արտահայտվել է սահմանամերձ բնակավայրերում: Զեկուցման մեջ դիտարկվելու են էթնիկ ինքնության դրսևորումները սահմանային գոտիներում, մասնավորապես՝ Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանում: Սահմանային համայնքներում էթնիկ ինքնությունն ակամայից առավել վառ է արտահայտվում, քանզի այդ հատվածները հանդիսանում են տարբեր էթնիկ հանրությունների եզրագիծը, և հետևաբար այս վայրերում չէին կարող իրենց հետքը չթողնել փոխադարձ շփումներն ու փոխազդեցությունները:

Հասարակության մեջ ժամանակի ընթացքում կատարվող փոփոխություններն արտահայտվում են նաև սոցիալական մշակույթում՝ կոլեկտիվ դատողություններում, էթնիկ ինքնության մեջ, խմբային վարքագծում և այլ հարթություններում: Ինքնությունը ճանաչողության շրջանակ է, այն մարդու ինքնության մասին պատկերացումների ամբողջությունն է, որում ներառված է անձնային բաղադրիչը (սեփական անցյալի ապրումները) և սոցիալական բաղադրիչը որևէ խմբի պատկանելությունը:

Զեկուցման մեջ անդրադարձ է կատարվելու նաև էթնիկ ինքնության կարևոր բաղադրիչ *էթնոցենտրիզմ* եզրույթին, որն իրենից ներկայացնում է սեփական խմբին դրական գնահատելու ունիվերսալ հակվածություն, ինչը զուգակցվում է օտար խմբին բացասական գնահատական տալու միտումով: Այդ առումով ի հայտ են գալիս ՄԵՆՔ-ի և ՕՏԱՐ-ի ընկալումները:

Զեկուցման մեջ դիտարկվելու են նաև էթնիկ ինքնության ձևավորման վրա իրենց ազդեցությունը թողնող կարծրատիպերը, որոնք ձևավորվել են պատմական տարբեր ժամանակներում և տարբեր գործոնների ազդեցությամբ:

Աշխատանքը կատարվել է 2016 թ. Տավուշի մարզի Բերդավան, Բաղանիս, Դովեղ, Կոթի համայնքներում իրականացված դաշտային ազգագրական նյութերի հիման վրա: Հետազոտությունը գլխավորապես իրականացվել է որակական և խմբային հարցումների մեթոդով, ինչպես նաև անհատական դիտարկումների հիման վրա:

Garegin Grigoryan

Manifestations of Ethnicity in Border Villages of Tavush Province

Keywords: *Ethnic identity, border areas, ethnocentrism, stereotype.*

The Armenian-Azerbaijani conflict over Nagorno-Karabakh/Artsakh since the eve of the independence of these post-Soviet nations has deeply affected the ethnic identity of the people, which in its turn has special expressions in bordering communities. The present paper discusses the displays of ethnicity in border areas of Armenia, particularly in the Noyemberyan region of Tavush province. In the border communities such manifestations are especially vivid and have personal, intimate nature due to the face-to-face position of Armenians towards the adversarial communities during the period of conflict and may leave deep traces in personal contacts and mutual relations.

Changes in the society, that occured in the course of time appear in social culture, notably in collective reflections, in ethnic identity, in group behavior, etc. Here, identity is taken as a cognitive frame, as one of the ways of human self-consciousness with two general constituents: individual/own life experience and expectations, and social/group affiliation and loyalty.

The paper also discusses "ethnocentrism" as a central feature of ethnic identity, which reveals the human inclination of positive assessment of one's own group, parallel to the negative assessment of the alien group. In the border communities, this age-long opposition of US-THEM has special characteristics.

Stereotypes of self and other images are discussed in this report as social component of ethnic identity in contemporary, or in chronological perspective of their appearance and functioning.

All conclusions and hypotheses in this study rely on long-term ethnographic survey, including observations, individual in-depth interviews and focus-group discussions the communities of the Armenian villages of Berdavan, Baghanis, Dovegh and Koti in Tavush province.

Սեդա Անանյան

Սերնդային կոնֆլիկտի գենդերային առանձնահատկությունները Սիսիանի տարածաշրջանի երիտասարդների ընկալումներում

Բանալի բառեր՝ *սերնդային կոնֆլիկտ, արժեքային փոփոխություն, գենդերային դերեր, գենդերային ընկալումներ:*

Հետազոտության թեման ուշխորհրդային և հետխորհրդային սերունդների միջև առկա սերնդային տարաձայնությունների ու միջսերնդային կոնֆլիկտների բնույթի մասին է: Զեկուցումը հիմնված է Սիսիանի տարածաշրջանում իրականացված դաշտային հետազոտությունների նյութի վրա: Ուսումնասիրության առարկան ուշագրավ է այն տեսակետից, որ առկա անցումային շրջանում հասարակության անդամները, տարբեր սեռի ներկայացուցիչներն առերեսվում են այնպիսի մարտահրավերների, որոնք հանգեցնում են միջսերնդային տարաձայնությունների: Հետազոտության առանցքային հարցադրումներն են.

- Որո՞նք են ընտանիքներում միջսերնդային կոնֆլիկտի առաջացման պատճառները:
- Միջսերնդային հարաբերությունները կարգավորող արժեքների ու նորմերի փոփոխությունը ինչպե՞ս է ազդել գենդերային ընկալումների և գենդերային դերերի վրա:
- Ինչպե՞ս են գլոբալ փոփոխություններն (տեղեկատվական փոփոխությունները և ժամանակակից տեխնոլոգիաները) ազդում գենդերային ընկալումների և գենդերային դերերի վրա:
- Որո՞նք են գենդերային բնույթ ունեցող միջսերնդային կոնֆլիկտների պատճառները:

Ուսումնասիրությունը հիմնված է որակական հետազոտության մեթոդաբանության վրա (ներառված դիտարկումներ, խորացված և կիսակառուցվածքային հարցազրույցներ և բանավոր պատմություններ)։ Հետազոտության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ միջսերնդային տարաձայնություններն ավելի ու ավելի ակնհայտ են դառնում և յուրահատուկ ազդեցություն են թողնում ներընտանեկան հարաբերությունների և մարդկանց առօրյա կյանքի վրա։

Seda Ananyan

Gender Features of Generational Conflicts in Sisian Youth Perceptions

Keywords: *Generational conflicts, transformation of values, gender roles, gender perceptions.*

The research topic is on generational gap and the essence of multifaceted generational conflicts in Late-Soviet and Post-Soviet period in Sisian region, Armenia. The subject is considered to be sensitive in terms of the changes and challenges the members of the society and the representatives of different genders have been facing during this transitional period of time.The key questions of the research are the followings: “What are the factors causing generational conflicts in the families?”, “In what way have the transformations of the values and norms regulating the relations between generations (Late-Soviet – Post-Soviet) impacted on the perceptions of gender roles?”,“In what way have global changes (informational, modern technologies) influenced gender perceptions and gender roles?”, “What are the factors causing gender character generational conflicts?”.

The research relies on qualitative methods: participant observation, in-depth and semi-structured interviews with targeted groups and oral history collections. Research results allow us to conclude that the gap between generations becomes more and more obvious and has specific impact on families and everyday life of the people.

Համլետ Մելքումյան, պ.գ.թ.

Հայաստանյան սոցիալական շարժումներ. հանրային տարածք և ազգայնականություն

Բանալի բառեր՝ *սոցիալական շարժումներ, #ElectricYerevan, ազգայնականություն, հանրային տարածք:*

2012 թվականից Երևանում տեղի են ունենում տարբեր սոցիալական շարժումներ: Այդպիսիք են «պահպանենք Մաշտոցի այգին» «100 դրամը», «#ElectricYerevan»-ը: Այդ շարժումները կառուցվածքով, ընթացքով և քննարկող հարցադրումներով նորարարական էին հայաստանյան հանրային կյանքում: Ես հիմնականում անդրադառնալու եմ «#ElectricYerevan»-ին, որը սկզբնական շրջանում ունենալով բաց և ձախական հատկանիշներ, կարողացավ դառնալ նաև համախմբման և սոլիդարության միջոց՝ հատկապես երիտասարդների միջավայրում: Շատերն այն նույնիսկ ընկալում են որպես սեքսուալ հեղափոխության օրինակ և աննախադեպ համարում հայաստանյան պահպանողական միջավայրում: Սակայն այն ընթացքի մի փուլից սկսեց վերափոխվել շարժման՝ ընդգծված ազգայնական բովանդակությամբ:

Քննարկելու եմ, թե ինչպես են քաղաքացիական և սոցիալական շարժումները 2014-2015 թվականներից սկսում դառնալ որպես քաղաքացիական նոր միջավայրերի և արժեքների ստեղծողներ (սոցիալական արդարություն և հավասարություն, սոլիդարություն և մասնակցային ժողովրդավարություն, հանրային շահ ևն), սակայն «լցվում» են էթնիկության և ազգայնական բովանդակությամբ՝ խնդիրները տեղափոխելով էթնիկության և ազգայինության հարթություն: Քաղաքացիական շարժումներում էթնիկության նշանների և բովանդակության առկայությունը դիտարկում եմ ազգայնականության համատեքստում:

Hamlet Melkumyan, Ph.D.

Social Movements in Armenia: Public Space and Nationalism

Keywords: *Social movements, #ElectricYerevan, nationalism, public space.*

Recently the citizens of Yerevan permanently participated in a number of political and social movements ranging from protests. One of the dramatic examples was the “#ElectricYerevan” protest (2015) against an imposed increase of the electricity cost. The protest firstly seemed rather open, democratic and leftist, and it brought about some interesting developments such as an unprecedented sense of collectivity among the youth, even overt sexuality manifestations, unusual for such a traditionalistic country as Armenia.

My focus will be on the discourse of social movements as spaces to create new civic belonging from the anthropological perspectives. I will present nowadays tendencies of transformation, reviewing from the point of view of banal nationalism and social movements. Although the actors of civil movements see protests as a platform of alternative civic education for new social values and identities (such as social equality and social justice, solidarity and participatory democracy, public good, etc.), they often face and end up with serious boundaries, such as nationalism. Recent social protests were turning into a nationalistic platform with an ethnocentric focus and hate speeches.

Լևոն Մարգարյան, պ.գ.թ.

2017 թ. նախընտրական քարոզարշավները Երևանի բակերում և դրանց առանձնահատկությունները

Բանալի բառեր ՝*քաղաքային միջավայր, Ազգային ժողովի ընտրություններ, Երևանի ավագանու ընտրություններ, քարոզարշավ, բակային քարոզարշավ, բակային հանդիպումներ, հանրային տարածք:*

2017 թ. ընթացքում Հայաստանում տեղի ունեցան երկու՝ ապրիլին Ազգային ժողովի և մայիսին Երևանի ավագանու ընտրությունները: Վերջինիս

արդյունքներով որոշվելու էր նաև Երևանի քաղաքապետը: Երկու ընտրություններն էլ առավել ակտիվորեն քարոզարշավային դրսևորումներ էին ստանում Երևան քաղաքում, մասնավորապես տարբեր թաղամասերի բակերում:

Բակի վերահանրայնացման միտումները քննարկել ենք մեր նախորդ ուսումնասիրություններում, մասնավորապես թե ինչպես են երևանյան բակերը Հայաստանի անկախության տարբեր փուլերում տրանսֆորմացվում և դառնում առանձին հանրային տարածքներ: Եվ ինչպես սովորաբար լինում է հանրային տարածքների հետ, բակային տարածքներից շատերը ևս դառնում են քաղաքական քննարկումների, այս դեպքում քաղաքական քարոզարշավի հարթակներ:

Այս զեկուցման մեջ, հիմնվելով բակային տարածքների հանրայնացման մասին մեր նախկին հետազոտությունների վրա կփորձենք հասկանալ, թե ինչպես էր 2017թ. նախընտրական ակտիվ քարոզարշավն արտահայտվում բակերում, ինչպես էր բակային տարածքի հանրային գործառույթը ինտեգրվում քաղաքական գործառույթի մեջ, ինչպես էին կազմակերպվում քարոզարշավները բակերում, ինչ սիմվոլներ ու հաղորդակցման ինչ հիմնական լեզու էին ընտրում բանախոսներն ու քաղաքացիները:

Զեկուցման համար նախատեսված այս հետազոտությունը տեսական իմաստով հիմնվում է Ռ. Սեննեթի, Յ. Հաբերմասի, Ջ. Ուեյնթրաբի և այլ հեղինակների ՝ հանրային տարածքի մասին գիտական աշխատությունների վրա:

Levon Margaryan, Ph.D.

2017 Election Campaigns in Yerevan Yards and Their Characteristics

Keywords: *Urban environment, National Assembly elections, Yerevan city council elections, campaign, yard campaign, yard meetings, yard as a public space.*

In 2017 two elections were held in Armenia. The first was National Assembly elections in April of 2017. The second was Yerevan City Council Elections in May of 2017 by the results of which the mayor of Yerevan is elected.

During both elections the electoral campaigns were actively held in Yerevan, particularly in the yards of different districts. In an article entitled “Tendencies of republicizing the outdoors in modern period Yerevan”, we have talked about how Yerevan yards are transformed at different stages of Armenia's independence, in particular, how they become separate public spaces. And as it usually happens with public spaces, many yard areas became a place for political discussions, in this case, platforms for political campaigning.

In this research we plan to explore Yerevan's urban environment, in particular, how Yerevan yards are becoming a public space. On the basis of our previous research on yard areas we try to explore the electoral campaigns held in yards, how the public function of the yard was integrated into the political function, how campaigns were organized in the yards, what were the symbols and the main language of communication for the speakers and the citizens.

The research for this report is based on theoretical findings of R. Sennett, J. Habermas, J. Weintraub and on other authors’ works on public space.

Անահիտ Ղարիբյան

Խորհրդային Հայաստանում իշխանությունների դեմ բռնի և ոչ բռնի պայքարի դրսևորումները. Խորհրդային դիմադրության առօրյան

Բանալի բառեր ՝ *խորհրդային առօրյա, դիմադրության առօրյա, խորհրդային բռնաճնշումներ, խորհրդային այլախոհություն, դիսիդենտական շարժում, ստալինիզմ:*

Խորհրդային տարիներին քաղաքական դիմադրության, զինված պայքարի, ընդվզման, ինչպես նաև այլախոհական շարժումների առօրեականության ուսումնասիրությունը և դրա մեկնաբանման խնդիրները սույն զեկուցման հիմնական նպատակներից են: Խորհրդային ժամանակաշրջանում դիմադրությունների, ընդվզման և այլախոհական շարժումները իրենց բազմազանությամբ մի կողմից դժվարություններ են ստեղծում հետազոտողի համար՝ սահմանելու դրանց ուսումնասիրման մեթոդաբանական

հիմքերը, մյուս կողմից երևույթի չուսումնասիրվածությունը նոր հնարավորություն է ստեղծում բացահայտելու նմանօրինակ դիմադրությունների դրսևորման օրինաչափությունները: Այդուհանդերձ, հնարավոր է տիպաբանել դրանք և առանձնացնել մի շարք յուրահատուկ դրսևորումներ:

Հետազոտական հիմնական խնդիրներն ու հարցադրումներն են.

- Իշխանությունների դեմ պայքարի ի՞նչ դեպքեր են եղել խորհրդային Հայաստանում:
- Ինչպե՞ս էին առաջանում դիմադրությունները, ինչպիսի՞ տարածում էին գտնում դրանք բնակչության շրջանում:
- Հիմնականում բնակչության ո՞ր խմբերն էին ընդգրկված նմանօրինակ շարժումներում:
- Զինված պայքարի, ըմբոստության, դիմադրության, այլախոհության և խորհրդային իշխանությունների դեմ բռնի և ոչ բռնի պայքարի ձևերի սահմանման և հասկացությունների տարանջատման ի՞նչ գործնական հնարավորություններ կան դրանք տիպաբանելու համար: Ընդսմին՝ առօրյայում ինչպե՞ս էին ընդունվում այս կամ այն շարժմանը տրված որակումները:
- Առօրյա պրակտիկաները ինչպե՞ս էին հարաբերվում խորհրդային գաղափարախոսական կառուցվածքների հետ:
- Ինչպե՞ս էին ձևավորվում խորհրդային առօրյա պրակտիկաները՝ իշխանությունների ձևավորած պրակտիկաների մերժման արդյունքում:
- Ինչպիսի՞ն էր խորդհրդային դիմադրությունների առօրյան:

Հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտության իրականացման ընթացքում ուսումնասիրվել են արխիվային նյութեր, իրականացվել է փաստաթղթային վերլուծություն, բացի այդ, կենսագրական և խորացված հարցազրույցների մեթոդով ցույց կտրվեն խորհրդային առօրյայում հանդիպող ընդդիմության և ապստամբության տիպական օրինակները, այլախոհական շարժումների առաջացման տրամաբանությունը, ինչպես նաև վերոնշյալ խնդիրների վերաբերյալ ստացված տեղեկատվությունը:

Սույն հետազոտության տեսական մոտեցումները հիմնականում բխում են, սակայն չեն սահմանափակվում Պիեր Բուրդիեի («Սոցիալական տարածության սոցիոլոգիա») տեսա-մեթոդաբանական հայեցակարգերից:

Anahit Gharibyan

Violent and Non-violent Resistance Movements to the Soviet Authorities. The Practices of Everyday Life Resistance

Keywords: *The dissidents' practices of everyday life in Soviet Armenia, political repressions in Stalin's time, dissident movements, Stalinism, Soviet everyday life practices.*

The main purpose of this paper is to investigate and explain the political demonstrations, armed strikes, the features of the practices of soviet dissidents' everyday life and also the issues of their explanation. In the USSR the strikes, demonstrations and dissident movements had their own distinctions in every state that caused new difficulties for the researchers to define the methodological basis for their explanation. In addition, these issues remain still unexplored, a fact that gives us a chance to explore the patterns of similar strikes, demonstrations and practices of soviet dissidents, whose values and activities are very little known to us. Above all, we will be able to allocate them and clarify peculiar manifestations. In spite of the demands during the Soviet times, the civic protests and dissident movements remain challenged, as well as damned.

The core research questions and issues are:

- What kind of resistance has been occurred in Soviet Armenia since the 1920s.
- How the demonstrations started, what was the degree of their popularity among the people.
- Generally, what groups of population were engaged in the resistance movements and protests.
- How were permitted the given classification of such kinds of protests.
- How did the daily practices relate to the ideological formations.
- How were the soviet everyday life practices initiated, when rejecting the practices formed by the soviet authorities.
- Find out the everyday life practices of the violent and non-violent resistance.

- Define the notions of the armed resistance, protests, dissident movements, violent and non-violent types of resistance and clarify their meaning.

Research Methodology: The research is implemented with the use of archival materials, primary and secondary materials of existing documents. In addition, for data collection the qualitative research method has been chosen, including both in-depth and biographic-narrative interviews.

The theoretical background of this paper is mainly based on the concepts of Pier Bordeaux "Sociology of Social space".

Հասմիկ Կնյազյան

Հաղորդակցման ստրատեգիաները աքսորյալների կողմից իշխանական կառույցներին ուղղված նամակներում

Բանալի բառեր՝ *նամակներ վերևներին, նամակներ աքսորավայրից, հաղորդակցման ստրատեգիաներ, սովետական լեզու, բռնաքսոր, ստալինյան բռնաճնշումներ:*

Այս զեկուցման շրջանակներում կքննարկվեն Հայաստանի Ազգային արխիվի 1191-6 ֆոնդի «աքսորվածների գործերում» պահվող նամակները: Այդ նամակները գրված են տարբեր աստիճանի կուսակցական ղեկավարներին՝ աքսորված հայերի և ազատության մեջ գտնվող նրանց հարազատների կողմից:

Համանման աղբյուրների հետ աշխատող շատ հետազոտողների կարծիքով իշխանությանն ուղղված նամակների և դիմումների նման ձևերը համարվում են հասարակության և պետության փոխադարձ շփման յուրօրինակ ձև:

Բացի այդ, այս նամակները հետաքրքիր են նաև այն առումով, որ դրանց մի մասը գրվել է Ստալինի մահից առաջ, իսկ մյուս մասը՝ հետո (1949թ.-ից մինչև 1958թ.-ը), ինչն էլ դրանց դարձնում է առավել հետաքրքիր. չէ՞ որ դրանք ընդգրկում են կարևոր ժամանակային շրջադարձ, որից հետո, ինչպես հայտնի է, սովետական իրականությունում մեծ փոփոխություններ եղան, այդ թվում՝ կտրուկ փոխվեց Ստալինի կողմից իրականացվող

ռեպրեսիվ քաղաքականությունը: Ուստի 1949թ.-ից մինչ 1953թ.-ը և 1953թ.-ից հետո գրված նամակներում կարելի է հետևել, թե ինչպես են փոխվում լեզվական ստրատեգիաները երկրի նոր իշխանական ղեկավարությանը դիմելիս:

Հետևելով Ա. Լիվշինին և Ի. Օռլովին, որոնք ուսումնասիրել են հոկտեմբերյան շրջանում (1917-1927թթ.) շարքային քաղաքացիների նամակները՝ ուղղված իշխանական օրգաններին և առանձին քաղաքական գործիչներին, կփորձեմ իրենց կողմից առաջարկվող որոշ խնդիրներ (դիմում-նամակներում իշխանության նկատմամբ վերաբերմունքը, դրանց ներքին կառուցվածքն ու արժեքների հիերարխիան, առաջնայնությունները, առավել բնորոշ դիսկուրսիվ ստրատեգիաները, հեղինակների ինքնաարտահայտման լեզվական առանձնահատկությունները և այլն) քննարկել իմ կողմից հետազոտվող աղբյուրի դեպքում:

Hasmik Knyazyan

Communication Strategies in the Letters of Deportees Directed to the Soviet Authorities and Governmental Structures

Keywords: *Letters to authorities, letters of deportees, communication strategies, soviet language, deportation, Stalin repressions.*

In this paper, I will discuss letters of deportees, which are being preserved in the sixth list of 1191 fund in the National Archive of Armenia. These letters were written by the Armenian deportees or their relatives and are addressed to Communist party authorities in different level. According to the scientists who work with this kind of research materials, the letters and applications sent to the authorities are a unique kind of communication between the society and the state. Apart from that, these letters had been written before and after Stalin’s death (from 1949 to 1958). This means that these letters coincide with the crucial point of historical turnafter, which, as it is known, brought many changes in Soviet reality including the drastic change of repressive policy of Stalin.Thus, in the letters written from 1949 to 1953 and after 1953 we can follow how applicants change the

language strategies applying to the new leaders of the country. Following A. Levshin and I. Orlov who studied the ordinary citizens' letters of post-revolutionary period (1917-1927) directed to the organs of government and separate politicians, based on my research materials I will try to describe the same issues suggested by them (the attitude to the authorities in letters-applications, those inner structure and hierarchy of values, the most special discursive strategies, the linguistic features of the author's self-representation, etc.).

Անահիտ Միքայելյան

Բանտի ազգագրությունն, ըստ Փարաջանովի ստեղծագործությունների

Բանալի բառեր՝ *բանտային ազգագրություն, բանտարկյալների առօրյա, կոլաժ:*

Ներկայացվելու է 1970-ական թթ. խորհրդային բանտի ազգագրությունն (բանտային առօրյան, կանոններն ու հասկացությունները, բանտարկյալների ճակատագրերը), ըստ անվանի կինոբեմադրիչ և արվեստագետ Ս. Փարաջանովի՝ բանտում ստեղծած գրաֆիկական աշխատանքների և կոլաժների:

1973-1977 թթ. Փարաջանովն անցկացրել է Ուկրաինայի խիստ ռեժիմի տարբեր ճամբարներում, որտեղ բանտարկված էին ծանր հանցանք գործած բանտարկյալները: Այդ չորս տարիների ընթացքում նա միշտ փորձել է ստեղծագործել, օգտագործելով ձեռքի տակ եղած ցանկացած նյութ՝ թղթից ու թաշկինակից մինչև չորացրած ծաղիկներ և կաթի շշերի կափարիչներ: Այդ գործերից շատերն այս կամ այն ձևով արտացոլում են բանտային կյանքի առօրյան: Բանտային թեմայով գործերի մի մասը ստեղծվել են արդեն ազատվելուց հետո: Զեկուցման մեջ կօգտագործվեն նաև Փարաջանովի բանտային նամակները, դրանց մեջ ուսումնասիրվող թեմային առնչվող տեղեկություններն ու գծանկարները: Կօգտագործվեն նաև բանտային թեմայով իր սցենարներն ու հիշողությունները:

Ի տարբերություն և ի լրումն Լ.Սամոյլովի (1990) և Ե. Եֆիմովայի (2004) բանտային ուսումնասիրությունների, օգտագործվելու է արվեստագետի ստեղծած պատկերագրական նյութը, իսկ ի տարբերություն Է. Բ.

Գուչինովայի (2016), ով օգտագործել է բանտարկյալների հետբանտային պատկերագրությունը, մեր ուսումնասիրությունը գլխավորապես հիմնվելու է հենց բանտում՝ *in situ* ստեղծած պատկերների վրա (հմմտ. հուշագրական և օրագրային նյութերի հետ): Փարաջանովի արվեստը հայտնի է իր պսևդոազգագրական կերպարներով և իրողություններով (Լ. Աբրահամյան 2001-2002), ուստի փորձ է արվելու հետազոտել իր բանտային արվեստն այդ կտրվածքով ևս:

Քննարկվելու են նաև թանգարանում բանտային արվեստը ներկայացնելու խնդիրը: Նյութը քննվելու է վիզուալ մարդաբանության, առօրեականության ազգագրության և նշանագիտության մեթոդների համադրությամբ:

Anahit Mikayelyan

The Ethnography of Prison Based on Parajanov's Works

Keywords: *Prison ethnography, daily life of prisoners, collage.*

The ethnography of Soviet prison in the 1970s (the daily life of prison, rules and concepts, the fate of prisoners) will be presented in this paper based on the graphic works and collages created in prison by famous film director and artist S Parajanov.

During the period of 1973-1977 Parajanov spent in different Ukrainian camps, where grave crimes committed prisoners were jailed. During these four years, he always tried to create, using any available material: from paper and handkerchief to dried flowers and milk bottle caps. Many of these works display the daily life of the prison in one or another way. Some of these works were created after his release. This paper will use and study Parajanov's prison letters, that include information and drawings related to the subject of prison life. We will use also his scenarios about prison life and memoirs.

Unlike and in addition to L. Samoilov's (1990) and E. Yefimova's (2004) researchon prison, we will use the imagery material created by the artist, and, unlike Y. B. Gucinova (2016), who has used prisoners' post-prison depictions, our research will mainly focus on the *in-situ* images, which Parajanov made (the

difference between memoirs and diary materials) in prison. Parajanov's art is famous for his pseudo-ethnographic characters and realities (L. Abrahamyan 2001-2002), hence an attempt will be made to explore his prison art in that context, too. We will discuss the problem of presenting Prison Art at the Museum. The material will be studied in combination with visual anthropology, ethnographic, and cognitive methods.

Հայկուհի Մուրադյան

Մշակույթի տները խորհրդային և հետխորհրդային Հայաստանում. իմաստային և գործառութային փոխակերպումները և ժառանգականությունը

Բանալի բառեր ՝ *Մշակույթի տուն, Խորհրդային միություն, հետխորհրդային Հայաստան, մշակութային քաղաքականություն, փոխակերպումներ:*

Սույն զեկուցման նպատակն է ներկայացնել մշակույթի տների ունեցած դերը և գործառույթները Խորհրդային Հայաստանում և դրանց փոխակերպումները հետխորհրդային շրջանում: Մշակույթի տները ոչ միայն Խորհրդային Հայաստանում, այլև սոցիալիստական մյուս բոլոր երկրներում խորհրդային մշակութային քաղաքականության հիմնական ինստիտուտներից էին, որոնք ձևավորվել էին՝ համաձայն խորհրդային գաղափարախոսության և խորհրդային իշխանությունների քաղաքական և սոցիալ-մշակութային նպատակների: Դիտարկել ենք խորհրդային շրջանում մշակույթի տների ներկայացուցչությունը, գործառույթները, կառուցվածքը, հիմնական միջոցառումները (օր.՝ պարտադիր նշվող տոները, հաճախ հրավիրվող մշակութային գործիչները, թեմատիկ զրույցները և այլն), այս կառույցների տեղադրությունը (գյուղի/քաղաքի կենտրոնում, թե ծայրամասում, հարակից կառույցները) և այլն:

Հետխորհրդային շրջանում մշակույթի տները ենթարկվեցին իմաստային, խորհրդաբանական և գործառութային փոխակերպումների: Դրանց մի մասն ընդհանրապես դադարեց գոյություն ունենալ (հաշվի առնելով նաև տնտեսական լուրջ խնդիրները, որոնք մշակույթի տների գոյության դադա-

րեցման հիմնական պատճառներից մեկն էին): Վերջին ժամանակներում նկատվում են մշակույթի տների իմաստային և գործառութային վերակազմություններ: Զեկուցման մեջ կքննարկենք մշակույթի տների՝ համայնքի կրթական և մշակութային կյանքում ձեռք բերած նոր նշանակությունը և գործառույթները: Աշխատանքը հիմնված է այն հիմնական հիպոթեզի վրա, որ խորհրդային գաղափարախոսության շրջանակներում ձևավորված և խորհրդային իշխանությունների կոնկրետ նպատակների համար ծառայող այս հաստատությունները Խորհրդային միության փլուզումից հետո կորցրեցին իրենց դերակատարությունը, գործառույթները և նշանակությունը համայնքի կյանքում: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ որոշ համայնքներում, այնուամենայնիվ, այս կառույցները շարունակում են գործել (իհարկե, ենթարկվելով փոփոխությունների և հարմարեցվելով նոր ժամանակների խնդիրներին), իսկ որոշ համայնքներում մշակույթի տները պարզապես դադարեցին գործելուց: Հետազոտությունը հիմնված է դաշտային աշխատանքների վրա, որոնք անցկացվել են Արարատ մարզի 30 գյուղական համայնքներում և Մասիս, Արտաշատ, Վեդի, Արարատ քաղաքներում:

Haykuhi Muradyan

"Houses of Culture" in Soviet and Post-Soviet Times: Semantic and Functional Transformations and Heredity

Keywords: *House of culture, Soviet Union, Post-Soviet Armenia, Cultural Policy, transformations.*

The present paper aims to investigate the roles and functions of "Houses of Culture" in Soviet and post-Soviet Armenia. The “House of Culture” used to be a key institution for cultural activities and for the implementation of state cultural policies not only in Armenia but in all socialist countries. In the post-Soviet period the “Houses of Culture” underwent a deep economic and symbolic crisis, with many of them ultimately being closed down. Recently there have been signs of re-orientation concerning the missions and the functions of the “Houses of Culture”. This paper discusses the new functions and meanings of these institutions for the communities that they are meant to serve; their role in social education of the

community. The paper is based on the hypothesis that the “Houses of Culture” no longer appeal to parts of the local communities, which are more attracted to new (often commercial) forms of leisure and creative self-expression. However, in many cases the “Houses of Culture” continue to play a pivotal role in the social and cultural life of the community. The outcomes of this paper are based on the fieldwork (in-depth interviews with the directors of Houses of culture, community councils, villagers, etc, participant observations) conducted in summer, 2017, in the framework of PhD thesis “Cultural Policy in Armenia after the collapse of the Soviet Union”. The research was done in the region of Ararat, in more than 20 villages.

Լիլիթ Մանուկյան

«Կուլտուրականության» դրսևորումները ուշ խորհրդային բնակարանի ներսույթում՝ գրադարանը և դաշնամուրը սովետահայ մարդու առօրեականությունում

Բանալի բառեր՝ *ուշխորհրդային շրջան, «կուլտուրականություն», պրեստիժ, սոցիալական դիրք, առօրեականություն, իրերի իմաստ, իրերի նշան(ավո-րում), սպառողականություն, գիրք/գրադարան, դաշնամուր:*

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից ի վեր պետական առաջնահերթություններից մեկն է համարվել «կուլտուրական» (культурный-մշակութային, քաղաքակիրթ) և «բազմակողմանի զարգացած» խորհրդային քաղաքացի ստեղծելու գաղափարը: Այդպիսի քաղաքացին համարվում էր երաշխիք կոմունիզմ կառուցելու հարցում: Հետևաբար, անգրագիտության վերացման, կուլտուրական հեղաշրջման գաղափարները դարձան պաշտո-նական խոսույթի կարևորագույն մաս: Մեծապես խրախուսվեց ինքնա-կրթությունը՝ գրքեր ու թերթեր կարդալու, կինոթատրոններ հաճախելու, երաժշտական կրթություն ստանալու միջոցով: Այս գաղափարները շարու-նակվեցին մինչև խորհրդային վերջին տարիները:

Զեկուցման մեջ կքննարկվեն պաշտոնապես խրախուսվող «կուլտուրա-կանության» ու «բազմակողմանի զարգացած խորհրդային քաղաքացի» լինե-

լու գաղափարների դրսևորումները մարդկանց առօրյա կյանքում: Ներկայումս՝ հետխորհրդային Հայաստանում, շատ տներում կարելի է տեսնել իրեր, որոնք խորհրդային վերջին տասնամյակներում ապրած մարդկանց համար իրենց ինքնության մեջ կուլտուրական մարդու բաղադրիչը կառուցելու կարևոր միջոցներ էին: Մասնավորապես, կքննարկվեն տան ներսույթի անբաժան մաս կազմող գրադարաններն ու դաշնամուրը՝ որպես «կուլտուրականության», «պրեստիժի», ինչպես նաև «սոցիալական կարգավիճակի» ցուցիչներ, և թե ինչպիսի առօրյա պրակտիկաներով էին մարդիկ այդ իրերի նշանակությունները ցույց տալիս:

Սպառողականության հասկացությունը և իրերի նշանակությունը վերլուծվել է Ժան Բոդրիարի (1968, 1970) տեսական սահմանումներով: Իրերի աշխարհը և մարդկանց համար դրանց ունեցած իմաստները վերլուծելու համար օգտվել եմ նաև Մերի Դուգլասի, Բերոն Այշերիուդի (1979) և Լեորա Օսլենդերի (1996) մոտեցումներից: «Կուլտուրականություն» հասկացությունը կքննարկվի Շեյլա Ֆիցպատրիկի (1992), Վերա Դանհմի (1976) տեսական մոտեցումների շրջանակում:

Զեկուցումը հիմնված է ուշխորհրդային շրջանը ապրած մարդկանց հիշողություններով կառուցված պատմությունների վրա: Հարցազրույցներն արվել են Երևան, Աբովյան, Էջմիածին, Արթիկ քաղաքների բնակիչների հետ: Դիտարկումներ ու լուսանկարներ են արվել խորհրդային շրջանի՝ իրերով կահավորված բնակարաններում:

Lilit Manukyan

The Manifestations of “Culturedness” in the Interior of Late-Soviet Armenian Houses: Private Library and Piano in the Everyday Life of a Soviet Man

Keywords*: Late-Soviet period, “culturedness”, daily life, signs and signification of objects, meanings of goods, consumerism, books/private library, piano, prestige, social standing, prestige.*

Since the establishment of the Soviet regime in Armenia, the idea of creating a “cultured” and “comprehensively developed soviet citizen” was one of the state imperatives. Such a citizen was seen as a main guarantee for building the

communism. Hence, the ideas of Cultural Revolution and elimination of illiteracy became an important part of the official discourse. In this context, (self) education through reading books and magazines, attending cinemas, getting musical education, was highly encouraged. These ideas continued to be active up until the last Soviet years.

This report will discuss the manifestations of becoming "cultured" and "comprehensively developed citizen" in people's daily life practices. Till now, in many houses in Armenia, one can see objects like books, pianos reminding the Soviet years. I will show that these objects served as a means to construct the identity of a "cultured" man. Moreover, the practices of acquiring books and pianos and their usage, will be described as a sign of showing one's social status and prestige. To analyze the data, the concepts of "consumerism" and "the signs of objects" have been applied, (Jean Baudrillar: 1968, 1970). To discuss the meanings of objects in people's lives, the theoretical approaches of Mary Douglas and Baron Isherwood (1979), Leora Auslander (1996), have also been applied. The concept of "culturedness" will be presented within the framework of Sheila Fitzpatrick (1992), Vera Dunham (1976).

The report is based on the memories of the people who lived durng the late Soviet period. In-depthinterviews have been conducted with the people living in Yerevan, Artik, Abovyan, Ejmiatsin cities. Photos have been taken and observations have been done in the house interiors still keeping the family libraries and pianos of Soviet period and the memories connected with these objects.

Սմբատ Հակոբյան

Երբ մոգությունն անհայտանում է. ծիսական շրջանի տեսության առաջարկման փորձ

Բանալի բառեր՝ *ծիսական տարածք, ծեսի փոփոխություն, թաղման սրահներ, մոգություն, հերմենևտիկ շրջան, բյուրեղացում:*

Ուսումնասիրությունը քննարկում է ժամանակակից երևանյան թաղման ծեսերում վերջին 2 տարիների ընթացքում հայտված թաղման կամ սգո

սրահների երևույթը: Մասնավորապես քննարկվում է, թե ծեսում ինչպիսի փոփոխություններ առաջացրին թաղման սրահները: Դիտարկումների արդյունքում ստացված դաշտային նյութի վերլուծությունը համադրվում է Ջոնաթան Զ. Սմիթի ծիսական տարածքի տեսության հետ, որի համաձայն՝ ծեսը պայմանավորված է հենց այն տարածքով, որտեղ այն իրականացվում է: Տարածքն, ըստ Սմիթի, ոչ միայն աշխարհագրական (բառացի) է, այն նաև փոխաբերական (կոնցեպտուալ և սոցիալական): Այլ կերպ ասած, խոսքը ոչ միայն ֆիզիկական տարածքի մասին է:

Չնայած որոշ հետազոտողներ քննադատում են Ջոնաթան Զ. Սմիթի մոտեցումը և պնդում են, որ նա գերագնահատում է տարածքի դերը, այնուամենայնիվ իմ վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ իսկապես տարածքը շատ կարևոր դեր է խաղում ծեսում: Թաղման սրահների հայտնվելը աստիճանաբար դուրս է մղում տունը որպես թաղման տարածք օգտագործելը, ինչի արդյունքում ժողովրդական պատկերացումների հետ կապված և մոգական բնույթ կրող բազմաթիվ արարողություններ՝ դագաղը վերցնելուց հետո սեղանը շուռ տալ, դագաղով դռանը երեք անգամ խփել, դագաղը պտտեցնել, դագաղը դնել բակում և այլն, այլևս չեն կատարվում սգո սրահներում:

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա առաջ է քաշվում ծիսական շրջանի տեսություն, որը հիմվում է հումանիտար և հասարակական գիտությունների մեջ առկա երկու կոնցեպտների վրա՝ հերմենևտիկ շրջան և ստատուսային բյուրեղացում: Տեսության համաձայն, երբ ծիսական որևէ տարր փոխվում է (տվյալ դեպքում ծիսական տարածքը), փոխվում են նաև ծեսի այլ տարրեր (վերանում են ժողովրդական պատկերացումների հետ կապված և մոգական բնույթ կրող ծեսերը), քանի որ ծեսը՝ որպես ամբողջություն, չի ունեցել բյուրեղացում (ժողովրդական և մոգական արարողությունները բնորոշ են եղել գյուղական և ավանդական միջավայրին, սակայն ավանդույթի ուժով շարունակվել են իրականացվել նաև քաղաքում և ոչ այնքան ավանդական հասարակարգ ունեցող հանրույթում): Այսինքն՝ տարրերի միջև առկա է եղել խզում, որը բացահայտել հնարավոր է միայն մեկ այլ տարրի փոփոխության շնորհիվ:

Smbat Hakobyan

When Magic Disappears: Attempt to Develop Theory of Ritual Circle

Keywords: *Ritual space, ritual change, funeral houses, magic, hermeneutic circle, crystallization.*

The paper discusses funeral houses in contemporary Yerevan, which appeared during the last 2 years. Notably, the question of what kind of influence and change these funerals houses have brought with them will be discussed. The data gathered during the fieldwork observations will be discussed in the scope of Johnathan Z. Smith's ritual space theory, according to which ritual is determined by the place or space it is performed. Place, Smith says, is not mere geographical (literal) it is metaphorical (conceptual and social) as well. In other words, it is not just a physical place.

Nevertheless, some authors criticize Johnathan Z. Smith's approach and claim, that he overestimates the role of space, but the results of my analysis show, that space in fact has a significant role in ritual. The appearance of funeral houses has gradually pushed back the personal home as a place of funerals: as a result, many rituals related to folk notions and magics (the inverting of the table after the removal of the coffin, hitting the door with the coffin, spinning the coffin, putting the coffin in the yardm etc.) have disappeared as the ritual takes place at a funeral house.

Based on the results of this research I attempt to develop a theory, which relies on two concepts in humanities and social sciences, namely hermeneutical circle and status crystallization. According to my theory, when an element of ritual changes (in this case ritual space) another element changes as well (rituals related to folk notions and magic disappear) because the ritual as a hole is not crystallized (folk and magic ceremonies were typical for more traditional and rural environments, though thanks to the tradition they had been practiced in the city and in the society with non-traditional social structure). That is to say there was a severance between the elements that appeared only when one of the elements has changed.

Թերեզա Ամրյան, պ.գ.թ.

Միստիկական գիտելիքի գաղափարը եզդիական կրոնական օրհներգերում

Բանալի բառեր՝ *սուֆիզմ, միստիցիզմ, եզդիականություն, կրոն, գիտելիք, մեկնաբանություն, նշանակություն:*

Եզդիական համայնքը ձևավորվել է 11-14-րդ դարերի ընթացքում Լալիշ կոչվող կիրճում, որը գտնվում է Հյուսիսային Իրաքի տարածքում: Համայնքը կազմավորվել է ադավիա սուֆիական եղբայրակցության հիմքի վրա, որը հիմնել էր սուֆի առաջնորդ Շեյխ Ադի բին-Մուսաֆիրը: Եզդիական կրոնը սուֆիական շատ տարրեր է պահպանել, քանի որ այն ձևավորվել էր սուֆիական եղբայրակցության գաղափարախոսության վրա: Միստիկական գիտելիքը խորհրդանշող մի շարք եզրեր հատուկ տեղ ունեն եզդիականության մեջ. դրանք առավելապես հանդիպում են եզդիական բանահյուսության մեջ, սուրբ գրքերում և կրոնական օրհներգերում: Այդ եզրերը կապված են միստիկական գաղտնի գիտելիքի ընկալման և դրա հետ առնչվող որոշակի երևույթների հետ: Ներկայումս եզդիական կրոնում այդ եզրերի սուֆիական նշանակությունը կորել է, և հիմա եզդիական աշխարհայացքի շրջանակներում դրանք չեն ստանում սուֆիական մեկնաբանություն: Այնուամենայնիվ, եզդիական կրոնական օրհներգերում դրանք կիրառված են իրենց բուն սուֆիական նշանակությամբ:

Tereza Amryan, Ph.D.

The Idea of Mystical Knowledge in Yezidi Religious Hymns

Keywords: *Sufism, mysticism, Yezidism, religion, knowledge, interpretation, meaning.*

The Yezidi community was formed in between the 11th and 14th centuries in the canyon called Lalish located in Northern Iraq. The community was based on

Adawia Sufi brotherhood founded by a Sufi leader Sheikh Adi bin-Musafir. The Yezidi religion has preserved many Sufi elements since it was formed on the ideology of Sufi brotherhood. Some terms designating the idea of Sufi mystical knowledge have special place in Yezidism: they are mainly mentioned in Yezidi lore, holy books and religious hymns. Those terms are related to the perception of mystical hidden knowledge and certain phenomena associated with that. The Sufi meaning of those terms is lost in contemporary Yezidi religion, and now they do not have Sufi interpretation in frames of Yezidi worldview. However, in the texts of Yezidi religious hymns these terms are used in their original Sufi meaning.

Հասմիկ Աբրահամյան, պ.գ.թ.

Ծոմը հայոց մեջ (պատմական համառոտ ակնարկ)

Բանալի բառեր՝ *ծոմ, պաս, սնունդ, արգելք, տոնացույց, մշակույթ, սովորույթ, կենցաղ:*

Սույն թեմայի ուսումնասիրության նպատակն է պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ վեր հանել և ընդհանուր գծերով ներկայացնել հայոց մշակույթում կենցաղավարած *ծոմ* երևույթը՝ 5-20-րդ դդ. ընթացքում կրած փոփոխություններով հանդերձ:

Թեման հետազոտվել է ազգագրական, կանոնագիտական, վիմագրական սկզբնաղբյուրների, մատենագրական գրավոր աղբյուրների, ուսումնասիրությունների և գեղարվեստական գրականության հաղորդած տվյալների հիման վրա:

Ըստ այդմ՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ 1. ներկայացնել հայոց մեջ սննդային սահմանափակումների և որոշակի ժամկետներում սննդից ամբողջովին կամ մասամբ հրաժարվելու պատճառները, 2. *ծոմ* և *պաս* երևույթների՝ միմյանցից անջատվելու պատճառները, 3. ծոմը պաշտոնական տոնացույցում բացակայելու և միայն ժողովրդական կենցաղում պահպանվելու պատճառները, 4. ծոմի դրսևորման ձևերը, 5. ծոմի հետ կապված ժողովրդական սովորույթները, 6. ծոմապահության նպատակները:

Ուսումնասիրությունը թույլ կտա համակողմանիորեն վեր հանելու ժողովրդի հոգևոր մշակույթին առնչվող մի երևույթ՝ ծոմը, որն իր ուրույն ազդեցությունն է ունեցել անձի աշխարհընկալման և կենցաղավարման որոշ նորմերի վրա։

Hasmik Abrahamyan, Ph.D.

Fast in the Armenian Tradition. (Historical Brief Overview)

Keywords: *Fast, food, interdiction/prohibition-church calendar, national culture, custom, everyday life.*

This study aims to explore the phenomenon of the fast and its variations in the Armenian culture in the 5^{th}-20^{th} centuries, by applying the historical-comprative method.

The following problems have been discussed: 1. The main reasons for partial or full refusal of food in certain periods. 2. The reason of separation of the fast into two parts: full refusal of any kind of food and refusing only some of them. 3. Reasons why the fast was absent from the official calendar of the Church but preserved in people's everyday life. 4. Forms of expression of the fast. 5. National customs related to the fast. 6. The aims of fasting.

The research relies on ethnographic, canonical, bibliographical sources, studies and artistic literature.

The study will promote the t comprehensive presentation of the fast, a phenomenon regarding the spiritual culture of people, which had influence on individual's worldview and everyday life.



ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
FOLKLORISTICS

Քրիստինա Այվազյան

Հանցանքի և պատժի դրսևորումները հայ ժողովրդական հեքիաթներում

Բանալի բառեր՝ *արդարադատություն, դատավոր, թագավոր, հանցանք, պատիժ, ամբաստանյալ, բողոքող, գործը քննել, բանտարկություն, գլխատում, կախաղան:*

Սույն զեկուցման մեջ քննության ենք առել հայկական իրապատում հեքիաթները, որտեղ ի հայտ են գալիս ոչ միայն արդարության վերականգնումը, հանցանքի համար պատիժը, այլև արդարադատությունը որպես այդպիսին: Իրապատում հեքիաթները ձևավորվել են հրաշապատում հեքիաթներից ավելի ուշ, հետևաբար արդարադատությունը ուշ շրջանի արդյունք է հեքիաթներում:

Հրաշապատում հեքիաթներում հերոսի նկատմամբ անարդարության դրսևորումը ինքնին ծառայում է իսկական հերոսի բացահայտմանը, նրա ուժի և հնարամտության արտահայտմանը: Հայկական հրաշապատում հեքիաթներում սովորաբար իբրև պատիժ չար հերոսներին կապում են ձիու պոչից և բաց թողնում, վտարում երկրից, գլխատում: Քննվող մոտիվների համար հանդես եկող հերոսներն են թագավորը՝ իբրև դատավոր, դահիճը, դատավորը: Թագավորը միաժամանակ նաև դատավոր է, որի մոտ են գալիս հերոսներն իրենց զանազան խնդիրներով: Սակայն, թագավորից բացի, հեքիաթների հերոս է դառնում նաև դատավորը, որին դիմում են հերոսներն իրենց դատը տեսնելու համար:

Ի տարբերություն հրաշապատում հեքիաթների՝ կան իրապատում հեքիաթներ, որոնք կարող են ամբողջությամբ նվիրված լինել արդարությանը, արդարադատությանը, հանցապատժությանը և ունենալ բարոյախրատական իմաստավորում:

20-րդ դարավերջին գրառված իրապատում հեքիաթներում դատավարության համար կարևորվում են նաև վկաները, Ավետարանի վրա երդումը: Երդմանն են դիմում հերոսներն իրենց արդարացնելու համար: Կիրառվում են այնպիսի իրավաբանական եզրույթներ, ինչպիսիք են «ամբաստանյալ»,

«բողոքող», «գործը քննել» բառերն ու արտահայտությունները: Կիրառվող պատժաձևերից են բանտարկությունը, գլխատումը, կախաղանը:

Christina Ayvazyan

The Expressions of Crime and Punishment in Armenian Folk Tales

Keywords: *Justice, judge, king, crime, punishment, culprit, claimant, case investigation, imprisoning, beheading and gallows.*

In this article we have discussed Armenian real tales, where not only the justice is restored and the crime is punished, but also the justice by itself is appeared. The real tales were formed later than the magic tales, so the justice is the result of later period in the fairy-tales. The expression of injustice towards the hero in magic tales promotes the revelation of the real hero, discovering his strength and creativity. In Armenian magic tales the wicked characters are usually punished by either tying to the horse's tail and letting off the horse, or banishing them from the country, or just beheading them.

In the discussed motives the acting heroes are the king as the judge, torturer and the judge by himself. The king can also act as a judge at the same time to whom the heroes refer with their different problems. Although, apart from the king, the judge can also become the hero of the tales to whom the heroes refer with their cases to be judged.

In difference to the magic tales, the real tales can be entirely devoted to the justice, the punishment of the crime and have a moral meaning.

In the real tales written at the end of XX century, the witnesses and the swearing on the Bible are important for justice. The heroes are swearing in order to justify themselves.

The following legal terms are used in the real tales: culprit, claimant, case investigation. The punishment includes imprisoning, beheading and gallows.

Լիլիթ Մկրտումյան

Հայ ժողովրդական կենդանապատում հեքիաթների ժանրային-կառուցվածքային առանձնահատկությունների շուրջ

Բանալի բառեր ՝ *կենդանապատում հեքիաթ, բանագիտություն, կենդանիներ, ժանր, կառուցվածք, կենդանական զրույց:*

Ըստ բանագիտական դասակարգման՝ կենդանապատում կամ կենդանական հեքիաթը վիպական արձակի ժանրերից մեկն է: Կենդանապատում հեքիաթը հրաշապատումի հետ միասին համարվում է ժանրի հնագույն տիպը: Կենդանապատում հեքիաթը ծագումնաբանորեն կապվում է կենդանիների մասին պատմող հնագույն առասպելներին: «Կենդանապատում հեքիաթ» անվանումը հուշում է, որ բանահյուսական այս նյութի դասակարգման համար հիմք են դարձել պատումների գլխավոր հերոսները: Այսինքն՝ այս դեպքում «կենդանապատում հեքիաթ» բանահյուսական տերմինը հանդես է գալիս իբրև ժանրային հիմնական ցուցիչ: Մարդկային հատկանիշներով օժտված, մարդկային տրամաբանությամբ առաջնորդվող կենդանիների մասին պատումները, անշուշտ, ոչ մի առնչություն չունեն կենդանիների իրական վարքի հետ: Կենդանիները այստեղ գործողությունների և առանձնահատկությունների պայմանական կրողներ են: Ժանրային դասակարգման համար գլխավոր հերոսներից բացի՝ հիմք է ընդունվում նաև պատումների միասնական կառուցվածքային առանձնահատկությունների առկայությունը: Կենդանապատում հեքիաթների երկացանկի դիտարկումը վկայում է, որ այստեղ կան հեքիաթներ, ուր կենդանիների հետ միասին գործում են նաև մարդիկ, նաև զանազան անշունչ իրեր և առարկաներ: Բացի այդ՝ ժանրի վերոնշյալ տեսակում ընդգրկված են պատումներ, որոնք երբեմն դժվար է անվանել հեքիաթ կամ ընդգրկել այդ տերմինի ներքո: Ժանրային պատկանելությամբ դրանք երբեմն մոտ են ավանդությանը, առասպելին, երբեմն՝ առակին: Հետևաբար՝ ժանրային բազմազանությունը ենթադրում է նաև կառուցվածքային առանձնահատկությունների բազմազանություն, դրանց միասնականության բացակայություն: Սա հիմք է տվել հետազոտողներից ոմանց՝ կիրառելու համար «կենդանա-

կան էպոս» տերմինը՝ իբրև տարբեր ժանրերի համախմբություն (կոնգլոմերատ՝ Ե.Կոստյուխինի տերմինն է): Հայ բանագիտական գրականության մեջ բանահյուսական այս նյութը բնութագրելու համար կիրառվել են կենդանական վեպ կամ կենդանական զրույց տերմինները:

Lilit Mkrtumyan

The Genre-Structural Specifics of Armenian Folklore Animal Tales

Keywords: *Animal tale, folklore, animals, genre, structure, animal talk.*

According to folklore classification, the animal tale is one of the genres of epic prose. The animal tale along with the fairy tale is considered the archaic type of tale genre. The animal tale originally is connected to archaic myths about animals. The name of "Animal tale" hints that the main characters of the tales became the basis to classify this folklore material. This means that "animal tale" folklore term is a basic genre index. The tales about animals which having human characteristics and led by human logic, surely, have no connection with real behavior of animals. Here the animals are conditional bearers of acts and specifics. The observation of animal tales certify that there are tales where people act with animals, and there are also different breathless things and objects. Apart from that, in the above-mentioned genre there are tales that are sometimes difficult to call "fairy-tale" or include under this term. Sometimes they are close to the tradition, myth, or even fable by their genre belonging. Consequently, the genre diversity assumes the variety of structural specifics and the absence of their unity. This was a reason for some researchers to use "animal epic" term as a conglomerate of different genres (conglomerate is a term of E. Kostyukhin). "Animal epic" or "animal talk" were the terms used to describe this folklore material in Armenian folklore literature.

Աննա Պողոսյան

Գործողության պոեզիան «Սասնա ծռեր» հերոսավեպի մոկաց պատումներում

Բանալի բառեր *՝ Մոկաց, տիպաբանական խումբ, գործողության պոեզիա, տաղաչափական կշռույթ, երգային հատված, վիպական գործողություն, հերոսավեպ, վիպական պատում, «Սասնա ծռեր»:*

Աշխարհի բոլոր ժողովուրդների և ժամանակների հերոսավեպերի նման հայ ժողովրդական հերոսավեպում՝ ի մասնավորի Մոկաց տիպաբանական խմբի պատումներում, առաջնակարգ տեղ ու դեր ունի գործողությունը, որն ի վերջո հանգում է վիպական հերոսների նկարագրությանն ու արժևորմանը:Այն հանդես է գալիս երեք հիմնական դրսևորումներով՝

ա. արարքների անվանումով,

բ. այդ արարքների նախապատրաստմամբ և ներկայացմամբ,

գ. դրանց հետևանքների թողած ազդեցությամբ:

Այս ամենը ներկայացվում է բանահյուսական մտածողությամբ, տաղաչափական ինքնատիպ կշռույթով, երգային հատվածներով, որն ունի զորեղ ներգործություն ունկնդիրների վրա՝ օժտված բանաստեղծական բույրով ու երանգով:

Anna Poghosyan

Poetry of Action in Mokq Stories of the Heroic Epos "Sasna Tsrer"

Keywords: *Moks' / Mokats, typological group, poetry of action, verse rhythm, song segment, epic action, epic, "Sasna tsrer", "Daredevils of Sasun".*

Similar to the epical works of all periods and nations, the epical action in the Armenian heroic epos is in the first place and of a special importance. It finally comes down to description and characterization of the hero's behavior.

It is represented in three main manifestations:

a. Denomination of the actions,

b. Preparation and representation of these actions,

c. Influence of consequences of their actions.

All these are represented in the form of the folk thinking, specific metrical weight, and song components, endowed with poetical taste and hue, which leaves a strong impression on the listener.

Հասմիկ Գալստյան

Սնահավատական զրույցներ

Բանալի բառեր ՝ *ժողովրդական զրույց, սնահավատություն, չար ու բարի ոգիներ, դևեր, հավատք, նախապաշարմունք:*

Ժողովրդական զրույցը վիպական բանահյուսության ժանրերից է: Այն իրենից ներկայացնում է պատմական, առասպելական կամ վիպապատմական բնույթի բանավոր կամ գրավոր ավանդություն: Ժողովրդական զրույցի տարատեսակներից է սնահավատական զրույցը, որում արտացոլվում են ժողովրդի հավատալիքային ու սնահավատական պատկերացումները, կենսընթացի դրսևորումները:

Սնահավատական զրույցները հեթանոսական ու քրիստոնեական հավատալիքների հետ կապված բանավոր պատմություններ են՝ գերբնական ուժերի ու երևույթների, արարածների մասին, որոնք իրենց բնույթով, ձևով, կենցաղավարման եղանակներով տարբերվում են բանավոր արձակի մյուս տեսակներից: Սնահավատական զրույցն ունի հստակ կառուցվածք. Պատմվում է առաջին դեմքով, պատմողի կողմից ներկայացվում է որպես լսած կամ տեսած իրողություն՝ վկայակոչելով որոշակի տեղ, ժամանակ:

Չար ու բարի ոգիների, դևերի, հրեշների ու վիշապների մասին պատմող բանահյուսական առաջին նմուշները հանդիպում ենք պատմահայր Մ. Խորենացու, Ե. Կողբացու, Կ. Գանձակեցու, Ա. Դավրիժեցու, Զ. Քանաքեռցու և այլ մատենագիրների վկայություններում, որոնք, անշուշտ, նախաքրիստոնեական աղերսներ ունեն:

Հայ բանագիտության մեջ սնահավատական զրույցները՝ իբրև առանձին ժանր, երբևէ չեն ուսումնասիրվել, հատուկ քննության առարկա չեն

դարձել, սակայն բավական մեծ տեղ են զբաղեցնում հայկական ազգագրական-բանահյուսական տպագիր ու ձեռագիր սկզբնաղբյուրներում: Նմանօրինակ նմուշները հավաքվել, տարբեր ժողովածուներում և պարբերականներում հրատարակվել են որպես ազգագրական հարակից նյութ՝ «Հավատք», «Սնոտիապաշտություն», «Ավելորդապաշտություն», «Նախապաշարումներ» և այլ խորագրեր ունեցող բաժիններում՝ ապագա ուսումնասիրության համար:

Hasmik Galstyan

Superstitious Stories

Keywords: *Folklore stories, superstition, kind and wicked souls, devil, belief, prejudice.*

The folktale is a genre of epic folklore. Basically, the folktales are historical, mythical or epic historical traditions in verbal or written form. Superstitious story is considered to be a type of folktale, in which peoples' beliefs, superstitious thinking and essence of life are reflected.

Superstitious stories are verbal stories related to pagan and Christian beliefs about extraordinary powers, phenomena and creatures. It is worth mentioning that superstitious stories differ from the other types of verbal prose in the character, form and ways of everyday life management.

The superstitious story has a fixed structure. It is told in the first person. The presenter tells the story in the present time as if it is a reality heard and seen by him or her and mentions specific place and time.

Folklore stories about kind and wicked souls, devils, demons and dragons have been firstly found in the citations of historians M. Khorenatsi, Y. Koghbatsi, K. Gandzaketsi, A. Davrizhetsi. Z. Kanakertsi and others, which, certainly, have pre-Christian origins.

Superstitious stories have never been studied in Armenian folklore as a separate genre. However, they dominate in the printed and handwritten sources of the Armenian ethnographic folklore.

Similar samples have been collected and printed in different digests and periodicals in the sections Beliefs, Superstition, Prejudice as an ethnographic cohesive material for future studies.

Նվարդ Վարդանյան, բ.գ.թ.

«Թագվորի՛ մեր, դու՛րս արի» հարսանեկան կատակերգի հորինվածքը և գործառնականությունը ծեսում

Բանալի բառեր՝ *հարսանեկան ծիսերգեր, շեմի ծեսեր, կատակերգեր, կառուցվածք, գովք, ծաղր, հարս և սկեսուր:*

Զեկուցման մեջ քննվում է հարսանեկան ծիսերգերի շարքում իր տարածվածությամբ և տարբերակների քանակով աչքի ընկնող «Թագվորի՛ մեր, դու՛րս արի» սկսվածքով սիրված կատակերգը: Ծիսերգը կատարվել է հարսնաբերի ծեսի ժամանակ, փեսայի դռան առջև՝ շեմի ծեսերին զուգահեռ: Կատակերգի՝ ինչպես երգելու ժամանակը, այնպես էլ սկսվածքային բանատողը բավական կայուն են: Այն սկսվում է փեսամորն ուղղված դիմում-կոչով՝ ***«Թագվորի՛ մեր, դու՛րս արի»***, որն իր մեջ ամփոփում է այս փուլի ծիսական առանցքային գործողությունը:

Ներկա զեկուցման շրջանակներում քննվում են կատակերգի 17 տարբերակներ: Ուսումնասիրությունը կատարվում է երգերի հորինվածքային առանձնահատկությունների բացահայտման ճանապարհով, քննվում են կառուցվածքային տիպերը, մոտիվների տեղաբաշխման յուրահատկությունները տարբերակներում, ինչպես նաև՝ ծիսերգերի գործառնականության առանձնահատկությունները ծիսական համատեքստում:

Տան շեմն այն անցումային տարածքն է, որը բաժանում է «յուրային» և «օտար» տարածքները: Փեսայի տան շեմի առջև կանգնած հարսը դեռևս օտար է և այդքանով՝ վտանգավոր և կասկածելի: Դրանով է պայմանավորված երգում՝ հարսին հակասական բնութագրող մոտիվների առկայությունը՝ դրական՝ որպես «փեսայի տունը շենացնող», և բացասական՝ որպես «տունն ավիրող»: Այս հակադիր մոտիվները ծիսերգի որոշ տարբերակներում տրամախոսական հակամարտության ձևով են կառուցվում, որոնք, անշուշտ, երգի առավել նախնական տարբերակներ են: Երգային երկխոսությունը տեղի է ունենում հակադիր կողմերի միջև, որոնք ծիսական յուրային-օտար հակադրություն են ներկայացնում: Գովքի և ծաղրի մոտիվները կատակերգի տարբերակներում տարբեր կերպ են տեղաբաշխվում՝ ստեղծելով կառուցվածքային բազմազան տիպեր:

Կատակերգի երգիծանքի առանցքում հարս/սկեսուր բանահյուսական հայտնի հակամարտող զույգն է: Չնայած որ հնչող երգիծական ակնարկները բնութագրում են հարսին, սակայն երգիծանքի թիրախը սկեսուրն է:

Կատակերգը, ուրախ-երգիծական բնույթ ունենալով հանդերձ, ենթատեքստում նաև խրատական բնույթ ունի: Ծիսերգում իրենց խոսքային ամրագրումներն են գտնում ետհարսանեկան կենցաղի մանրամասները, կենցաղային այն պարտավորությունները, որոնք պետք է ստանձնի նորահարսը նոր տանը, և ակնարկվում են այն թերացումները, որոնք կարող են անցանկալի հետևանքների հանգեցնել: Ծաղրական մոտիվները հաճախ կառուցվում են գովքի մոտիվների համաբանությամբ, դրանց ծաղրանմանակման ճանապարհով՝ ստեղծելով իրար հակադրվող հաջորդական մոտիվներ:

Nvard Vardanyan, Ph.D.

The Composition and Functionality of Wedding Joke Song “Mother of Groom, Come out” in Ceremony

Keywords: *Wedding ceremonial songs, threshold ceremonies, joke songs, structure, praise, mockery, daughter-in-law and mother-in-law.*

The paper discusses the beloved joke song starting with the phrase “Mother of groom, come out” (*Թագվորի մեր, դուրս արի* – Tagvori mer, durs ari), prominent among wedding ceremonial songs with its widespread presence and number of versions. The ceremonial song was performed during the ceremony of bringing the bride to the groom’s house, in front of the groom’s door in parallel with the threshold ceremonies. Both the singing time and the starting phrase of the joke song are quite stable. It starts with a call to the groom’s mother – ***“Mother of groom, come out”***, which sums up the pivotal action of this phase.

Within the framework of this report, 17 versions of the joke song are discussed. The study goes the way of discovering compositional peculiarities of songs and discusses the structural typesand idiosyncrasies of motive distribution in the versions, as well as the functionality peculiarities in ceremonial context.

The threshold of the house is the transitional area, which divides “familiar” and “foreign” areas. The bride standing in front of the groom’s house is still foreign and as such is dangerous and suspicious. This is the reason of contradicting motives

characterizing the bride: positive as someone “bringing prosperity to the groom’s house” and negative as someone “ruining the house”. In some versions of the ceremonial song, these opposing motives are built in the form of dialectic contradictions, which certainly represent older versions of the song. The singing dialogue occurs between opposite parties, representing ceremonial opposition between familiar and foreign. The motives of praise and mockery are distributed differently in the versions of the joke song, creating various structural types.

The couple daughter-in-law/mother-in-law, famously antagonistic in folklore, is the axis of the satire in the song. Although the satirical allusions of the song characterize the daughter-in-law, the target of satire is the mother-in-law.

Despite having a happy and satirical nature, the joke song has a didactic subtext. The ceremonial song verbally establishes the details of the daily routine after the wedding, the duties the bride has to assume in the new house, and hints at the neglect of duties, which can have undesired consequences. The satiric motives are often built analogous to the motives of praise, parodying them and creating sequential opposing motives.

Տորք Դալալյան, բ.գ.թ.

Նվագարանների մասին առասպելաբանական պատկերացումները միջնադարյան Հայաստանում

Բանալի բառեր՝ *նվագարան, առասպել, ավանդազրույց, հեթանոսություն, քրիստոնեություն, գաղափարախոսություն:*

Հայ միջնադարյան սկզբնաղբյուրներում հիշատակվում են մի շարք նվագարաններ, որոնց մասին հաճախ բերվում են նաեւ հավելյալ տեղեկություններ՝ դրանց գործածության եւ կառուցվածքի վերաբերյալ: Այս առնչությամբ հայտնի են զանազան միջնադարյան գրավոր ավանդազրույցներ եւ առասպելական-ծագումնաբանական պատմություններ, որոնք նկարագրում են նվագարանների առաջացումը: Բնականաբար այդ պատումները պարուրված են քրիստոնեա-կրոնական շղարշով եւ գաղափարախոսությամբ: Ավելի վաղ՝ հեթանոսական շրջանի հայկական ավանդազրույցներ ու առասպելներ մեզ հայտնի չեն: Հայտնի է, որ մեր հին դյուցազներգական պատումները ներկայացնում էին հեթանոսական

աստվածների, դյուցազուն-հերոսների եւ առասպելական արքաների սխրագործություններն ու արարքները: Քանի որ դրանք կտրականապես մերժվեցին վաղ եկեղեցական գաղափարախոսների կողմից, մերժվեցին նաեւ նվագարանները, որոնք նախկինում ձայնակցում էին այդ դյուցազներգությունները եւ զանազան ծիսական արարողություններ (թաղում, հարսանիք, եւն): Ըստ քրիստոնեական գաղափարաբանության՝ երաժշտական գործիքների մեծ մասը համարվում էր սատանայի գործունեության արգասիք: Նվագարանների հանդեպ նման բացասական վերաբերմունքը շարունակվեց քրիստոնեության ընդունումից հետո մի քանի հարյուրամյակ: Հետագայում, սակայն, «Հայկական Վերածննդի» եւ «քրիստոնեական հանդուրժողականության» դարաշրջանում, ժողովրդական երգարվեստն ու նվագարվեստը սկսեցին դուրս գալ «ընդհատակից» եւ համընդհանուր տարածում գտնել: Եկեղեցին, ի վերջո, փոխեց իր ժխտողական վերաբերմունքը այդ երևույթների նկատմամբ: Զեկուցման մեջ փորձ է արվելու համակարգված ձեւով ներկայացնելու նվագարանների մասին պատկերացումների ժամանակագրական զարգացումը:

Tork Dalalyan, Ph.D.

Mythological Images about Musical Instruments in Medieval Armenia

Keywords: *Musical instrument, myth, legend, paganism, Christianity, ideology.*

In the Armenian medieval sources a series of musical instruments are mentioned. We have often some additional information concerning the use and the structure of them. In this regard, various medieval written legends and mythical genealogical stories tell about the origin and the invention of the musical instruments. It is not surprising that these stories are covered by christian-religious crape and ideology. Unfortunately, no myths and legends from earlier pagan epoch have preserved. As it is known, our ancient epic stories and songs described the deeds and the actions of the pagan gods, the heroes, and the mythical kings. Since they were categorically denied by the early ideologists of the Church, the

instruments which were previously associated with these songs and with various ritual ceremonies (burial, wedding, etc.) were also denied. According to the Christian ideology a great number of musical instruments were considered to be a product of the devil. Such a negative attitude towards the musical instruments continued several centuries after Christianity was adopted. Furthermore, however, in the era of the «Armenian Renaissance» and the "Christian tolerance", the folk songs and the musical art emerged from «underground» and started to spread commonly. The Church, eventually, changed its negative attitude towards those phenomena. In our presentation we will try to systematically represent the chronological development of the ideas and images concerning the musical instruments.

Նայիրի Խաչատուրեան

Բանահիւսական տարբեր ժանրերի ազդեցութեան դրսեւորումը հայ ժողովրդական օրօրներում

Բանալի բառեր ՝ *երաժշտաբանահիւսութիւն, օրօր, երգ, ժանր:*

Օրօր երգը համարւում է երաժշտաբանահիւսութեան (երաժշտական ֆոլկլոր) ինքնուրոյն եւ կայուն ժանր: Ի տարբերութիւն ծիսակրօնական օրհներգերի, որոնք թերեւս հնագոյնն են ընդհանրապէս երգարուեստի եւ մասնաւորապէս՝ հոգեւոր երգարուեստի պատմութեան մէջ, օրօրը կամ օրօրոցային երգը կարելի է բնութագրել իբրեւ աշխարհիկ երգուող բանարուեստի առաջին կոթողներից մէկը: Վաղնջական շրջանում օրօրները սերում էին նախնական բնածայնութիւններից եւ հնչազաղափարային բառերից, որոնք ստանում էին մեղեդային ռիթմիկ երանգաւորում: Մի կողմից՝ դրանք օրհնաբանական երգեր էին՝ ձօնուած երեխային, միւս կողմից՝ ունէին նաեւ գործնական նշանակութիւն, որի նպատակն էր՝ թմրեցնող հանգիստ մթնոլորտ ստեղծել մանկիկի համար եւ քնեցնել նրան:

Մարդկային հասարակութեան եւ կենցաղի զարգացման հետ մեկտեղ՝ օրօրացային երգը եւս զգալի ձեւափոխումների է ենթարկուել: Զարգանալով եւ նոր յատկանիշներ ձեռք բերելով՝ օրօրների զանազան տեսակներ յաճախ շատ աւելի հարուստ բովանդակութիւն եւ ձեւ են ընդունել, քան զուտ միայն

մանկանն ուղղուած օրհնանքների եւ մաղթանքների երգափունջ լինելը: 19-20-րդ դարերում բանահաւաքների գրի առած նիւթերում հանդիպում ենք օրօր երգերի նմուշների, որոնք այս կամ այն չափով կրում են այլ բանա-հիւսական ժանրերի ներգործութիւնը: Բազմաթիւ օրօրների մէջ կարող ենք առանձնացնել պատմական, լալիքի, սիրոյ եւ այլ ժանրերի պատկանող եր-գային տարրեր: Այդ տարրերը կարող են նկատելիօրէն ազդել օրօրներում որոշակի տողերի ու պատկերների, ինչպէս եւ դրանցից բխող եղանակաւոր-ման վրայ:

Զեկուցման մէջ փորձ է արուելու վերհանել նշուած մակաշերտերը, որոնք սկզբնապէս խորթ են եղել բուն օրօրներին եւ արդիւնք են փաստօրէն բանահիւսական զանազան ժանրերի փոխներգործութեան:

Nairi Khatchadourian

The Manifestation of the Influence of Different Folklore Genres in Armenian Folk Lullabies

Keywords: *music folklore, lullaby, song, genre.*

The lullaby is considered as a distinct and stable genre in music folklore. Unlike the ritual hymns, which are perhaps the oldest in the history of music, and in particular in the history of spiritual music, the lullaby or cradle-song can be described as one of the first pillars of secular singing oral tradition. In ancient times, lullabies were born from primitive onomatopoeia and onomatopoetic words that received melodic rhythmic tone. On one hand, they were blessing songs dedicated to the child, and on the other hand they also had a practical purpose to create a relaxing atmosphere for the child and to lull him to sleep.

Along with the development of the society and the lifestyle, lullabies also undergone significant changes. By developing and acquiring new features, the many varieties of lullabies often have received a much greater content and style than being merely a song bouquet of wishes and blessings sung to the child. In the 19th and 20th centuries, we find examples of lullabies, which somehow carry the influence of other folklore genres. In many lullabies, we can distinguish song

elements belonging to historical, lament, love, and other genres. These elements can have a noticeable impact on certain lines and images, as well as on the melody originated from them.

In this paper, an attempt will be made to identify the above-mentioned strata that were originally spurious to the very essence of lullabies and are actually the result of the impact of various genres.

Երիտասարդ գիտնականների 15-րդ միջազգային գիտաժողովի մասնակիցների մասին

1. **Ալեքսան Ջուհարյան,** ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, lyosh777@gmail.com
2. **Անահիտ Ղարիբյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի կողմից ֆինանսա-վորվող «Բանավոր պատմությունների կենտրոն», anahit-gharibyan@rambler.ru
3. **Անահիտ Միքայելյան**, Ս. Փարաջանովի թանգարան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ anahitam@mail.ru
4. **Աննա Ազիզյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, annamalah@yahoo.com
5. **Աննա Նալբանդյան**, nalbandyananna@yahoo.com
6. **Աննա Պողոսյան,** ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, annakamoevna@gmail.com
7. **Աննա Տարասովա**, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտության ինստիտուտ, taa-volga@yandex.ru
8. **Ավետիս Գրիգորյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, grigoryan.avetis.9@gmail.com
9. **Արման Նալբանդյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, nalbandyan.arm@yandex.ru
10. **Արմենուհի Մկրտիչեան**, Ժնևի համալսարան (Շվեյցարիա), armenuhi@bluewin.ch
11. **Արսեն Մարտիրոսյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, arsen-martirosyan-1989@mail.ru
12. **Բենիկ Վարդանյան**, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, vbenik@yahoo.com
13. **Գայանե Հակոբյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, gayik20@gmail.com
14. **Գարեգին Գրիգորյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, garikgrigoryan83@gmail.com
15. **Դավիդ Լեոպոլդ**, Բեռլինի Սոցիալական գիտությունների շրջանավարտների դպրոց (Գերմանիա), david.leupold@yahoo.com
16. **Դիաննա Միրիջանյան,** ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, dianamirijanyan@gmail.com

17. **Ելենա Վասիլյևա**, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտության ինստիտուտ, vasilieva.elena.ivanovo@gmail.com
18. **Թերեզա Ամրյան**, Երևանի պետական համալսարան, amryantereza@yahoo.com
19. **Լիլիթ Մանուկյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, l_manukyan@yahoo.com
20. **Լիլիթ Մկրտումյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, lilit.mkrtumyan.83@mail.ru
21. **Լուսինե Ալեքսանյան**, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, aleqsanyanlusine@gmail.com
22. **Լուսինե Հարությունյան**, ՀՀ ֆինանսների նախարարություն, lusinaharutyunyan93@gmail.com
23. **Լևոն Մարգարյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, levonlragir@gmail.com
24. **Համլետ Մելքումյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, melkumian.h@gmail.com
25. **Հայարփի Անանյան**, Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարան, ananyanhg@gmail.com
26. **Հայկ Հայդոսյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, haykhay@rambler.ru
27. **Հայկուհի Մուրադյան**, Երևանի պետական համալսարան, Haykuhi.muradyan@ysu.am
28. **Հասմիկ Աբրահամյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, hasmikabrahamyan@yandex.ru
29. **Հասմիկ Գալստյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, gasmik@mail.ru
30. **Հասմիկ Գրիգորյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, grigoryanhasmik86@yahoo.com
31. **Հասմիկ Կնյազյան**, Սանկտ Պետերբուրգի Եվրոպական համալսարան (ՌԴ), hasmik.knyazyan@gmail.com
32. **Հասմիկ Հովհաննիսյան**, Հայաստանի պատմության թանգարան, hassmik@yahoo.com
33. **Մարիամ Շախմուրադյան**, Երևանի պետական համալսարան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, shahmouradyan@gmail.com
34. **Նայիրի Խաչատուրեան**, Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, n.khatchadourian@gmail.com

35. **Նարինե Եղիկյան**, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, narine.yeghikyan@gmail.com
36. **Նարինե Սարգսյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, narinehsarksian@gmail.com
37. **Նինո Օքրոսցվարիձե**, Թբիլիսի Իլիա պետական համալսարան, (Վրաստան), nino.okrostsvaridze@iliauni.edu.ge
38. **Նվարդ Վարդանյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, nvardv@yahoo.com
39. **Ռուզաննա Ծատուրյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ruzantsaturyan@yahoo.com
40. **Սեդա Անանյան,** ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, sedananian@gmail.com
41. **Սմբատ Հակոբյան,** ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, smbat.hakobian@gmail.com
42. **Սոնա Մանուկյան,** ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, sonamanukyan1992@gmail.com
43. **Սոսե Աղայան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, sosehaghaian@gmail.com
44. **Սուսաննա Աղամյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, susannaiae@mail.ru
45. **Տաթևիկ Հարությունյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, tatevharutyunyan@yahoo.com
46. **Տիգրան Ալեքսանյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, tigranalexanyan@yandex.ru
47. **Տորք Դալալյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, torqdal@yahoo.com
48. **Քրիստինա Այվազյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, christina.ayvazyan@gmail.com

About Participants of the 15th International Conference of Young Scientists

1. **Aleksan Juharyan,** Institute of Archaeology and Ethnography, NAS RA, lyosh777@gmail.com
2. **Anahit Gharibyan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, Centre of Oral history founded by "Konrad Adenauer" stiftung, anahit-gharibyan@rambler.ru
3. **Anahit Mikayelyan**, Sergei Parajanov Museum, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, anahitam@mail.ru
4. **Anna Azizyan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, annamalah@yahoo.com
5. **Anna Nalbandyan**, nalbandyananna@yahoo.com
6. **Anna Poghosyan,** Institute of Archaeology and Ethnography, NAS RA, annakamoevna@gmail.com
7. **Anna Tarasova**, Institute of Archaeology of Russian Academy of Sciences, taa-volga@yandex.ru
8. **Avetis Grigoryan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, grigoryan.avetis.9@gmail.com
9. **Arman Nalbandyan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, nalbandyan.arm@yandex.ru
10. **Armenuhi Magarditchian**, Geneva University (Switzerland), armenuhi@bluewin.ch
11. **Arsen Martirosyan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, arsen-martirosyan-1989@mail.ru
12. **Benik Vardanyan**, Shirak Center of Armenological Studies, NAS RA, vbenik@yahoo.com
13. **Gayane Hakobyan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, gayik20@gmail.com
14. **Garegin Grigoryan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, garikgrigoryan83@gmail.com
15. **David Leupold**, Berlin Graduate School of Social Sciences (Germany), david.leupold@yahoo.com
16. **Dianna Mirijanyan,** Institute of Archaeology and Ethnography, NAS RA, dianamirijanyan@gmail.com
17. **Elena Vasileva**, Institute of Archaeology of Russian Academy of Sciences, vasilieva.elena.ivanovo@gmail.com

18. **Tereza Amryan**, Yerevan State University, amryantereza@yahoo.com
19. **Lilit Manukyan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, l_manukyan@yahoo.com
20. **Lilit Mkrtumyan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, lilit.mkrtumyan.83@mail.ru
21. **Lusine Aleksanyan**, Memorial Complex of Sardarapat Battle, National Museum of Armenian Ethnography and History of the Liberation Struggle, aleqsanyanlusine@gmail.com
22. **Lusine Harutyunyan**, Ministry of Finance of Republic of Armenia, lusinaharutyunyan93@gmail.com
23. **Levon Margaryan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, levonlragir@gmail.com
24. **Hamlet Melkumyan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, melkumian.h@gmail.com
25. **Hayarpi Ananyan**, Museum of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, ananyanhg@gmail.com
26. **Hayk Haydosyan**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, haykhay@rambler.ru
27. **Haykuhi Muradyan**, Երևանի պետական համալսարան, Haykuhi.muradyan@ysu.am
28. **Hasmik Abrahamyan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, hasmikabrahamyan@yandex.ru
29. **Hasmik Galstyan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, gasmik@mail.ru
30. **Hasmik Grigoryan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, grigoryanhasmik86@yahoo.com
31. **Hasmik Knyazyan**, European University at St Petersburg (Russia), hasmik.knyazyan@gmail.com
32. **Hasmik Hovhannisyan**, History Museum of Armenia, hassmik@yahoo.com
33. **Mariam Shakhmuradyan**, Yerevan State University, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, shahmouradyan@gmail.com
34. **Nairi Khachadourian**, Komitas Museum-Institute, n.khatchadourian@gmail.com
35. **Narine Yeghikyan**, Memorial Complex of Sardarapat Battle, National Museum of Armenian Ethnography and History of the Liberation Struggle, narine.yeghikyan@gmail.com

36. **Narineh Sarkisian**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, narinehsarksian@gmail.com
37. **Nino Okrostsvaridze**, Ilia State University, (Tbiisi, Georgia), nino.okrostsvaridze@iliauni.edu.ge
38. **Nvard Vardanyan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, nvardv@yahoo.com
39. **Ruzanna Tsaturyan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, ruzantsaturyan@yahoo.com
40. **Seda Ananyan,** Institute of Archaeology and Ethnography, NAS RA, sedananian@gmail.com
41. **Smbat Hakobyan,** Institute of Archaeology and Ethnography, NAS RA, smbat.hakobian@gmail.com
42. **Sona Manukyan,** Institute of Archaeology and Ethnography, NAS RA, sonamanukyan1992@gmail.com
43. **Soseh Aghaian**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, sosehaghaian@gmail.com
44. **Susanna Adamyan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, susannaiae@mail.ru
45. **Tatevik Harutyunyan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, tatevharutyunyan@yahoo.com
46. **Tigran Aleksanyan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, tigranalexanyan@yandex.ru
47. **Tork Dalalyan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, torqdal@yahoo.com
48. **Christina Ayvazyan**, Institute of Archaeology and Ethnography, NAS RA, christina.ayvazyan@gmail.com

Թեմատիկ նկարներ

1. *Դամբարան. Նոր Օշական,* լուսանկարը՝ Պ. Ավետիսյանի
2. *Լարախաղացներ*, լուսանկարը՝ Հ. Խառատյանի
3. *Տիտղոսաթերթ, Մուղնիի ավետարան*, լուսանկարը՝ Т. Измайлова «Армянская миниатюра XI века», Москва, 1979

Photos

1. *Kurgan. Nor Oshakan*, photo by P. Avetisyan
2. *Equilibrists*, photo by H. Kharatyan
3. *Title list, Gospel of Mughni*, photo from T. Izmaylova "Armenian miniature of the XI century", Moscow, 1979

Գիտաժողովի կազմակերպիչ՝
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Երիտասարդ գիտնականների խորհուրդ

Հասցե՝ Երևան, 0025, Չարենցի փ. 15
Հեռ.՝ (+374) 10 55 68 96
Էլ. Փոստ՝ ysc@iae.am, ysc.iae.arm@gmail.com

Conference Organizer
Young Scientists Council of
Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Address: 15 Charents st, 0025, Yerevan
Tel: (+374) 10 55 68 96
Email: ysc@iae.am, ysc.iae.arm@gmail.com